

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Նախագահական Թե՛ստորդարանական Համակարգ

1995-ի Յուլիս 5-ին, ժողովրդային հանրաքուեով վաւերացուեցաւ անկախ Հայաստանի առաջին Սահմանադրութիւնը ու այդ օրը դարձաւ պաշտօնական տօն:

2005-ին, Ռոպերթ Քոչարեանի օրով եւ 2015-ին Սերժ Սարգսեանի նախաձեռնութեամբ Սահմանադրութիւնը երկու անգամ ենթարկուեցաւ փոփոխութեան: Խնդրայարոյց նկատուեցաւ երկրորդ փոփոխութիւնը, որ եկաւ անցում կատարելու նախագահական համակարգէն դէպի խորհրդարանական: Այս փոփոխութիւնը արժանացաւ մեծ դիմադրութեան, նկատի ունենալով որ, ան յատուկ գրուած էր Սարգսեանի պաշտօնավարումը երկարաձգելու համար, երբ մօտ էր իր աւարտին հասնելու անոր երկրորդ եւ վերջին նախագահական շրջանը: Օրին Սարգսեան հակադարձելով իր քննադատներուն վստահեցուց որ, նպատակ չունի որպէս վարչապետ շարունակելու իր ղեկավարումը: Հետագային դրժելով իր խոստումը 2018-ին ան ընտրուեցաւ վարչապետ: Այս դարձաւ Սերժ Սարգսեանի անկումին գլխաւոր դրոշմապատճառներէն մին ու Թաւշեայ ժողովրդային յեղափոխութեամբ աւարտին հասաւ Քոչարեան-Սարգսեան զոյգի 20-ամեայ իշխանութիւնը:

Յուլիս 5-ի տօնին առթիւ ժողովուրդին ուղղուած իրենց ուղղերցներուն մէջ Նախագահ Արմէն Սարգսեան եւ Վարչապետ Նիկոլ Փաշինեան ակնարկեցին սահմանադրական նոր փոփոխութեան անհրաժեշտութեան մասին, առանց յստակեցնելու թէ ինչպիսի փոփոխութիւններ կը պատկերացնեն այս հանգրուանին: Թէեւ Նախագահ Արմէն Սարգսեան տարբեր առիթներով խօսած էր Հանրապետութեան նախագահը յաւելեալ լիազօրութիւններով օժտելու անհրաժեշտութեան մասին:

Ինչ կը վերաբերի Նիկոլ Փաշինեանին, անցեալին ան արտայայտուած էր նախագահական համակարգին վերադառնալու գաղափարին դէմ: Սակայն, վերջին շրջանին չէր բացառած նման հաւանականութիւնը, մանաւանդ երբ Նախագահ Սարգսեան մերժեց ստորագրել Վարչապետի կարգ մը հրամանագիրները՝ երկիրը հասցնելով սահմանադրական ճգնաժամի եզրին:

Նախագահական համակարգի առաւելութիւններէն գլխաւորը այն է որ, այդ կ'ապահովէ աւելի երկար կայունութիւն երկրէն ներս:

Եւրոպական Միութիւնը Կը Պատրաստուի Աւելի քան 1.5 Միլիարդ Եւրօ Գումար Յատկացնել Հայաստանին

Եւրամիութիւնը պատրաստակամութիւն կը յայտնէ յառաջիկայ 5 տարիներուն 1,5 միլիարդ Եւրոյի գումար յատկացնել Հայաստանի մէջ հինգ առանցքային ծրագիրներու, որոնց շարքին՝ Միւլիքի մարզի զարգացման համար: Փաստաթուղթը ներկայացուած է Յուլիս 2-ին, Պրիւքսէլի մէջ առանձնացնելով այն նախաձեռնութիւնները, որոնք Եւրոպական Յանձնաժողովը մտադիր է իրականացնել մինչեւ 2025 թուականը Արեւելեան Գործընկերութեան անդամ երկիրներուն մէջ:

Հայաստանի մասով Եւրոպական Յանձնաժողովը կը ծրագրէ.

1. Աջակցել 30,000 մանր ու միջին պիզնեսներուն՝ կայուն, նորարար եւ մրցունակ տնտեսութեան համար,
2. Խթանել սոցիալ-տնտեսական զարգացումը եւ հաղորդակցութիւնը՝ աջակցելով Հիւսիս-հարաւ միջանցքին,
3. Ներդրումներ կատարել տեղեկատուական տեխնոլոգիաներու, գիտութեան ու տեխնիկայի ոլորտներէն ներս,

4. Ամրապնդել հարաւային շրջաններու դիմադրողականութիւնը,

5. Ներդրումներ կանաչ Երեւանի համար՝ ուժանիւթի արդիւնաւէտ օգտագործման եւ բնութեան աւելի քիչ վնաս հասցնող աւտօբուսներու գործարկման ուղղութեամբ:

Ուղենշային առաջին ծրագրով կը նախատեսուի 500 միլիոն Եւրոյի աջակցութիւն տրամադրել փոքր ու միջին պիզնէսի 30,000 ներկայացուցիչներուն: «Համաճարակէն յետոյ տնտեսութեան վերականգնումը Հայաստանի համար զերակայ առաջնահերթութիւն է», - ըսած է Եւրոպական Յանձնաժողովը, արձանագրելով՝ այս հարցով օգնելով Հայաստանի գործարարներուն՝ Եւրամիութիւնը կը նպաստէ նոր աշխատատեղերու ստեղծման, պիզնէսի զարգացման ու արդիականացման, երկարաժամկէտ կտրուածքով՝ Հայաստանի կայուն սոցիալ-տնտեսական վերականգմանը:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Վարիչ Մարմնի Հանդիպումը ՀՀ Գլխաւոր Հիւպատոս Արմէն Բայբուրդեանի Հետ



ՍԴՀԿ ներկայացուցիչները ՀՀ գլխաւոր հիւպատոս՝ դեսպան Արմէն Բայբուրդեանի հետ

Չորեքշաբթի, Յունիս 30-ին Հայաստանի Հանրապետութեան Լոս Անձելըսի Հիւպատոսարանէն ներս, ՍԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւնը հանդիպում ունեցաւ ՀՀ գլխաւոր հիւպատոս՝ դեսպան Արմէն Բայբուրդեանի հետ: Հանդիպման ընթացքին ՍԴՀԿ-ի ներկայացուցիչները շնորհաւորեցին Հայաստանի ժողովուրդին, որ Յունիս 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն կարողացաւ տէր կանգնիլ ազատ

ընտրելու իր իրաւունքին ու կայացնել իր հաւաքական որոշումը: Պատուիրակութիւնը նաեւ շնորհաւորեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը ու անոր գլխաւորած Կուսակցութիւնը՝ արձանագրած տպաւորիչ յաղթանակին առթիւ: Այս առթիւ ՍԴՀԿ ներկայացուցիչները բարձր գնահատեցին Հիւպատոս Բայբուրդեանի գործունէութիւնը Արեւմտեան ափի նահանգներուն մէջ եւ խիստ կարեւոր

Մոսկուայի Մէջ Փաշինեան-Փութին Հանդիպում

Յուլիս 7-ի երեկոյեան Մոսկուայի մէջ մեկնարկած է Հայաստանի վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանի եւ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի հանդիպումը:

Նախքան փակ հանդիպման անցնիլը Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ Ռուսաստանի ղեկավարի հետ ստիպուած է աւելի յաճախ անվտանգութեան հետ կապուած հարցեր քննարկել, քանի որ տարածաշրջանային իրավիճակը կայուն չէ, մասնաւորապէս, անհանգիստ է հայ-ատրպէյճանական սահմանը:

«Ռուս խաղաղապահների տեղակայումից յետոյ իրավիճակն ընդհանուր առմամբ հանգիստ է, բայց պարբերաբար լինում են անհանգստութեան պահեր: Մասնաւորապէս, կայ անհանգստութիւն հայ-ատրպէյճանական սահմանին», - ըսաւ Հայաստանի ղեկավարը՝ աւելցնելով, որ ցաւօք, դեռ ամբողջովին լուծուած չէ գերիներու հայրենադարձման հարցը, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց Փութինին՝ վերջերս 15 հազար մագերիներու վերադարձի համար: Փութին իր խօսքին մէջ

ըսաւ, որ զգալուն հարցերը կարելի է լուծել ժողովուրդի աջակցութիւնը ունենալու պարագային: Ռուսաստանի ղեկավարը ընդգծեց, որ այդ աջակցութիւնը Փաշինեանը ունի. «Դրա համար ես Ձեզ շնորհաւորում եմ եւ ակնկալում լուրջ քննարկում բոլոր այն հարցերի շուրջ, որ վերջին շրջանում ակտիւ քննարկում ենք», - ըսաւ Ռուսաստանի առաջնորդը:

ԱՄՆ Ու Ֆրանսա Ողջունած Են 15 Հայ Գերիներու Վերադարձը

ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ ԱՄՆ-ն ու Ֆրանսան ողջունած են Ռուսաստանի միջնորդութեամբ եւս 15 գերիներու ազատ արձակումը եւ Հայաստանի կողմէ Ատրպէյճանին անցած տարածքներու ականապատման քարտէզներու տրամադրումը: Երկու երկիրներն ալ կոչըրած են կատարելու Նոյեմբեր 9-ին կողմերու ստանձնած պարտաւորութիւններն ու ազատելու բոլոր հալ գերիները:

ԱՄՆ յիշեցուցած է, որ դեռ Յունիս 12-ին գերիներու վերադարձն ու ականապատման քարտէզներու տրամադրումը կատարուեցաւ ԱՄՆ-ի աջակցութեամբ նաեւ Վրաստանի միջամտութեամբ՝ այդ կերպ հիմք դնելով Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ հետագայ համադրութեան: Մի-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Անդադար Զորավարժութիւններ Ու Սպառնալիքներ

ԷՍՍԱ ՊԱՐԻՍԵԼԵՍ

Ջինուորական հագուստը գիշեր-ցերեկ հագից չհանող Ալիեւի պահուստը վկայում է այն մասին, որ նա իրեն պատերազմական վիճակում է գտնում 44-օրեայ պատերազմում ձեռքբերուած համաձայնութիւնից յետոյ շուրջ 8 ամիս է անցել, իսկ թուրք-ատրպէյճանական «յաղթանակած» բանակը, որն արդէն միասնական բանակ է, հերթական զորավարժութիւններն է անցկացնում՝ մէկը-միւսի ետեւից:

Ամէնուր գինուորական հանդերձանք կրող, գինուորական հագուստը գիշեր-ցերեկ հագից չհանող Ալիեւը մի կողմից պնդում է, որ ԼՂ-ի խնդիրը լուծուած է, նման հակամարտութիւն գոյութիւն չունի, սակայն, չգիտես ինչու, գոնէ նրա արտաքինը վկայում է այն մասին, որ «յաղթանակած» երկրի նախագահը իրեն գտնում է պատերազմական վիճակում:

Յունիսի 28-30-ն անցկացուած զորավարժութիւններում ներգրաւուած էր մինչեւ 600 անձնակազմի անդամ, 40 տանկ եւ այլ զրահատեխնիկա, 20 ականանետ եւ տարբեր տրամաչափի այլ տեսակի հրետանային սարքաւորում, 7 մարտական եւ տրանսպորտային ուղղաթիւ, տարբեր նշանակութեան 3 անօդաչու եւ մինչեւ 50 միաւոր ավտոմոբիլային տեխնիկա: Ըստ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան՝ Յունիսի 21-23-ը յատուկ մարտավարական գորավարժութիւններ են անցկացուել, որոնց մասնակցել են Նախի-

Ղեանի կայազօրի զօրքերը եւ թուրքիայի ՁՈՒ կառավարման մարմինները:

Օրերն Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը հանդիպել էր բանակի ղեկավար կազմին, նա յայտարարել է, որ գինուած ուժերի թուաքանակն աւելացուելու է, ինչպէս նաեւ ձեռք են բերուելու նոր սպառազինութիւններ: «Ճիշտ վերլուծելով դարաբաղեան երկրորդ պատերազմի արդիւնքներն ու ընթացքը՝ մենք, իհարկէ, կ'աւելացնենք մեր ռազմական հզօրութիւնները: Պատերազմի աւարտից յետոյ նոր պայմանագրեր կնքելու յանձնարարականներ են տրուել, սկսուել է ժամանակակից տեխնոլոգիաների վրայ հիմնուած նոր սպառազինութիւններ գնելու գործընթացը», - ասել է Ալիեւը գինուորական բարձրագոյն հրամանատարութեան հետ կայացած հանդիպմանը:

Յայտնի է, որ Ատրպէյճանի, թուրքիայի եւ Փաքիստանի գինուած ուժերի յատուկ ստորաբաժանումները գալիք Սեպտեմբերին համատեղ զորավարժութիւն են անցկացնելու: «Որոշումն արդէն ընդունուած է, ներկայ պահին փորձագէտների խմբերից մէկը գտնուած է Ատրպէյճանում եւ ստուգում է զորավարժութիւնների անցկացման տարածքը», - ասել է Ատրպէյճանի ՊՆ նախարար Ջաֆիր Հասանովը Real TV-ի հարցազրույցում:

Ի դէպ, Հասանովի նշել է հարցազրույցում բաւական ռազգրաւ շեշտադրումներ կան, որոնք պէտք է առնուազն մտահոգեն Ռուսաս-

տանին, որտեղ իրենց ռազմավարական դաշնակից Հայաստանին 44-օրեայ պատերազմում պարտուելու համար պատճառներ ներկայացնելիս առաւել հակուած են Հայաստանին աւելի թուլացնել՝ իրենց թունոտ հակաքարոզչութեամբ, քան՝ Հայաստանի հանդէպ ակնյայտ թշնամական գործողութիւններ իրականացնող թուրք-ատրպէյճանական տանդեմից հնարաւոր յետագայ սադրանքները վերլուծել:

Ահա, Հասանովը խոստովանել է, որ թուրքիայի հետ համագործակցութիւնը վճռորոշ դերակատարում է ունեցել պատերազմում Ատրպէյճանի յաղթանակի գործում: «Խօսելով թուրքիայի հետ ռազմական համագործակցութեան մասին՝ միայն անցեալ տարի 13 խոչորամասշտաբ համատեղ զորավարժութիւն է անցկացուել: Իրանք կազմակերպուել են, որ թուրքական գինուած ուժերի սպաները օգնեն մեր սպաներին՝ մարտական պատրաստուածութիւնը հասցնել աւելի բարձր մակարդակի», - ասել է Հասանովը՝ նշելով, որ անձնակազմի պատրաստուածութիւնը շատ կարեւոր է: «Նրանց պատրաստումը շատ կարեւոր է: Մարտական պատրաստուածութիւնը, բարոյահոգեբանական պատրաստուածութիւնը, փորձի փոխանակումը: Գիտէք, որ թուրքական ՁՈՒ-ն աշխարհի ամենաուժեղ գինուած ուժերից է, եւ դա մեր հնարաւորութիւնն է: Մենք ունենք նոյն լեզուն, կրօնն ու արմատները, եւ դրանից օգուտ ենք քաղում: Դա ՆԱՏՕ-ի

ամենաուժեղ բանակներից է: Նրանք յաջող գործողութիւններ են իրականացրել Սիրիայում ու այլ երկրներում: Եւ, բնական է, թուրքական գինուած ուժերի աջակցութիւնը պատերազմին պատրաստուելու հարցում անգնահատելի է», - ասել է Ատրպէյճանի ՊՆ ղեկավարը:

Այնուհետեւ, Հասանովը չաւելել է, որ մեծ աշխատանք են տարել՝ ատրպէյճանական բանակը թուրքական գինուած ուժերի մոտեւորին համապատասխանեցնելու ուղղութեամբ: Ի դէպ, ատրպէյճանական CBC-ի հետ զրոյցում էլ Ջաֆիր Հասանովը խոստովանել է, որ որոշ տեխնիկական միջոցներ չեն կարողացել զիմադրել Հայաստանի հետ ռազիոնէլեկտրոնային պայքարում: «Հակառակորդը ստեղծել էր հզօր ռազիոնէլեկտրոնային դաշտ, նրանք գինանոցում ունեն ռուսական արտադրութեան ամենաժամանակակից ռազիոնէլեկտրոնային պայքարի համակարգեր, եւ դա իր դերն ունեցաւ», - ասել է Հասանովը:

Թուրքական բանակի հետ միաձուլման այս խոստովանութիւնն էրտողանի՝ Շուշի այցելութիւնից ու Շուշիի հռչակագիր ստորագրելու յետոյ բոլորովին էլ զարմանալի չէ: Չարմանալին Մոսկուայի հանդարտութիւնն է՝ այն դէպքում, երբ Ատրպէյճանը չի էլ թաքցնում, որ շարունակելու է գինուել, ամբարպնդել բանակը: Յստակ աւուում է, որ 44-օրեայ պատերազմի աւարտից յետոյ էլ տրուել են համապատասխան յանձնարարականներ, ստորագրուել են նոր պայմանագրեր, սկսուել է ժամանակակից

Շաբ.ը էջ 14

Չկայ ՀԱՊԿ ճեղիմակութիւն, Այստեղ Հայաստանի ճեղիմակութեան Հարցն է

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԵԼԵԱՆ

Հայաստանի խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահը «տարօրինակ» է որակում ՀԱՊԿ գլխաւոր քարտուղարի յայտարարութիւնը, թէ Հայաստանի սահմանի խախտումն ու ատրպէյճանական գինուժի առաջխաղացումը ազդեալի է, այլ սահմանային միջադէպ, ըստ այդմ ՀԱՊԿ չունի միջամտութեան անհրաժեշտութիւն:

Գլխաւոր քարտուղար Ջասի այդ յայտարարութիւնը Հայաստանում առաջացրել է հանրային բուռն արձագանք, բայց ամբողջ հարցն այն է, որ խնդիրը այլեւս վաղուց դուրս է այդպիսի արձագանքների դաշտից եւ պահանջում է պետական արձագանք, այլ կերպ ասած՝ Հայաստանի վերաբերմունքը ՀԱՊԿ անդամ Հայաստանի հանդէպ՝ ՀԱՊԿ վերաբերմունքին:

Բանն այն է, որ հարցն այլեւս ՀԱՊԿ հեղինակութիւնը չէ, եթէ ընդհանրապէս եղել է այդպիսի հարց: Բանը Հայաստանի հեղինակութիւնն է, որովհետեւ ՀԱՊԿ-ն արհամարում է Հայաստանին: Իհարկէ, տրամաբանութիւնը յուշում է, որ դա նաեւ հարուածում է հենց կառուցի վարկին, որովհետեւ՝ մեղմ ասած, տարակուսելի եւ անհեթեթ է, երբ ռազմա-քաղաքական պլոքը իր դաշնակցի հանդէպ անտարբեր է, իսկ նրա թշնամու հանդէպ՝ հաւատարիմ: Բայց, ՀԱՊԿ-ն հեղինակութիւն, վարկ երբեք չի էլ ունեցել, որպէսզի դիտարկենք այն հարուածի տակ յայտնուելու

հանգամանքը: Ընդհանրապէս, ՀԱՊԿ ռազմա-քաղաքական պլոքը չկայացած պլոք է ի բնէ, որովհետեւ դրա անդամներն ունեն թերեւս մէկ ընդհանուր խնդիր՝ մտահոգուել թիւնը Ռուսաստանից: ՀԱՊԿ՝ գործնականում բոլոր անդամներն էլ այդ կառուցում են, որովհետեւ չլինելու դէպքում խնդիր կ'ունենան ՌԴ հետ, իսկ դա նրանք չեն ուզում: Իհարկէ, հասկանալի է, որ նրանց համար կարեւոր է ՌԴ աջակցութիւնը անվտանգային հարցերում, սակայն այդ խնդիրը միանգամայն հնարաւոր էր լուծել երկկողմ յարաբերութեամբ եւ պլոքի ձեւաւորումը բխում էր միմիայն ՌԴ ռազմավարութիւնից:

Իր շրջանակից դուրս, ՀԱՊԿ-ն ունեցել է արձանագրային նշանակութիւն, եւ թերեւս ունի այդպիսին: Այլ կերպ ասած, աշխարհում ՀԱՊԿ ընդունուած է ի գիտութիւն, ոչ աւելի: Հետեւաբար, չկայ ՀԱՊԿ հեղինակութեան խնդիր, կայ Հայաստանի վարկի, պետական արժանապատուութեան հարց: Եթէ ՀԱՊԿ-ն պէտք է արհամարի Հայաստանը, ապա այդ դէպքում Հայաստանը կամ պէտք է գնայ մինչեւ վերջ եւ պարզապէս սկսի ՀԱՊԿ անդամութեան առնուազն սառեցման գործընթաց, կամ Հայաստանը չպէտք է դնի ՀԱՊԿ առաջ անվտանգային խնդիրներ, որպէսզի արժանանալով այդօրինակ վերաբերմունքի, չյայտնուի անյարմար վիճակում: Իսկ բանը հենց այն է, ինչպէս նշեցինք, որ անյարմար վիճակում

յայտնուում է հենց Հայաստանը, ոչ թէ ՀԱՊԿ-ն: Ըստ այդմ, տուեալ դէպքում Հայաստանի խնդիրն է հասկանալ եւ մշակել յետագայ անելիքը: Հնարաւոր է անարգանքի սիւնին գամել Ջասին եւ ՀԱՊԿ-ն ընդհանրապէս, բայց դա ընդամէնը «բարոյական» խնդիր է: Քաղաքական առումով Հայաստանը պէտք է կայացնի լուրջ որոշումներ, կամ այլեւս չփորձել ՀԱՊԿ-ի ներգրաւում՝ արհամարանքի չարժանանալու համար, կամ, եթէ իրավիճակը շատ աւելի լուրջ է՝ ՀԱՊԿ-ի առաջ դնել առաւել լուրջ խնդիրներ, եւ ի վերջոյ դնել անդամութեան նպատակահարմարութեան հարցը:

Ինքնին պարզ է, որ Հայաստանի անվտանգային խնդիրները գործնական առումով կամ լուծուում են ՌԴ-ի հետ երկկողմ մեխանիզմներով, կամ, եթէ չեն լուծուում ոչ մի կերպ՝ եթէ խօսքը վերաբերում է եւրասիական մեխանիզմներին: Եւ, ինչպէս օրինակ, ԵԱՏՄ դէպքում Հայաստանի վարչապետը բարձրաձայնում էր, որ էներգակիրների գնային միասնական մեխանիզմի չգալու դէպքում վերանում է ԵԱՏՄ իմաստը, հետեւաբար դրան անդամակցելու իմաստը, նոյն կերպ՝ եթէ ՀԱՊԿ-ն սահմանային միջադէպ է համարում Հայաստանի տարածքային անձեռնմխելիութեան խախտումը, ապա վերանում է ՀԱՊԿ իմաստն ու հետեւաբար անդամութեան իմաստը:

Շաբ.ը էջ 14



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԵ ԱՋԱՊԱՂՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party
 of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Շաբ.ը էջ 14

ԼՈՒՐԵՐ

Սերժ Սարգսեան Քաղաքական Պատուեր Ընելէն Առաջ Թող Յիշէ 2008 Թուականը. Նախկին Քաղաքական Բանտարկեալ

Յուլիս 1-ին, Սերժ Սարգսեան իր եւ միւսներու գործով դատական նիստի ժամանակ, երբ դատախազը աւարտեց ներկայացնել մեղադրական եզրակացութիւնը ըսաւ.

«Ես լսեցի մեղադրողի ընթերցածը: Մեղադրանքն ամբողջովին կեղծ է, այն հաստատուել է դատախազութեան կողմից քաղաքական պատուէրի շրջանակում»:

Այս առնչութեամբ Civic.am-ը գրուցած է նախկին քաղական բանտարկեալներու հետ, որոնք 2008 թուականին իրենց քաղաքական հայեացքներուն համար հալածուած եւ բանտարկուած են:

Զրոյցի ընթացքին, ՀԱԿ վարչութեան անդամ՝ Արամ Բարեղամեան, որ 2008 թուականի Մարտ 1-ի վաղ առաւօտեան, երբ յատուկ ջոկատայինները ցրած էին Ազատութեան հրապարակի նստացոյցը, ան գլխին ուժեղ հարուածէն պատուած քստացած էր եւ դէպքէն 7 օր անց հիւանդանոցէն անմիջապէս կալանաւորուած էր դատար Ալեքսանդր Ազարեանի որոշմամբ, այնուհետեւ դատապարտուած էր 6 տարի ազատազրկման, որմէ ետք բանտարկուած էր 3,2 տարին:

«Սերժ Սարգսեանը քաղաքական հետապնդում ասելուց առաջ, թող չիշի 2008 թուականը, ամբողջութեամբ փաստերը նկարուած կան, «կորսուած գարունը»



Նախկին քաղական բանտարկեալ Արամ Բարեղամեան

Թող մի անգամ էլ նայի, իմանայ, թէ ինչ է նշանակում քաղաքական հետապնդում, էդ ամբողջ անցեալը չիշի, թող վերադառնայ հիմա, իմանայ ինքն արդեօ՞ք քաղաքական հետապնդման է ենթարկուում, թէ՞ ոչ: Ես կարծում եմ՝ ծիծաղելի է, չեմ էլ ուզում նոյնիսկ մեկնաբանել: Ինքն ասել է քաղաքական պատուէր, թող ժողովուրդը դատի, ես ասելու բան չունեմ: Ես չէի կարծում, որ իրեն այդ յօդուածով մեղադրանք կ'առաջադրեն, ես աւելի խիստ պատիժներ էի ենթադրում, բայց ունենք այն ինչ ունենք», - ըսաւ Արամ Բարեղամեան:

Ալէն Սիմոնեան՝ Քոչարեանին. Ազգային ժողովը Ընտրուած Է 5 Տարիով, Այլ Կանխատեսում Ընելը Սխալ Է

«Այս խորհրդարանն ընտրուած է Սահմանադրութեամբ նախատեսուած 5 տարի ժամկէտով, եւ այլ կանխատեսումների հիմքեր չկան», գործող Ազգային ժողովի փոխնախագահ՝ Ալէն Սիմոնեան այսպէս արձագանգեց յայտարարութեան, թէ այս խորհրդարանը 1.5 տարուայ կեանք ունի:

«Խորհրդարանն ընտրուած է 5 տարի ժամկէտով, եւ որեւիցէ այլ կանխատեսում անելը, կարծում եմ, սխալ է: Ինչ վերաբերում է՝ ճգնաժամը լուծուած է, թէ չէ, կարծում եմ՝ իր մասով ՀՀ քաղաքացիին իր ճգնաժամը լուծել է, եւ իր գնահատականները գրուտ հիմնուած են իր ցանկութիւնների եւ պատկերացումների վրայ», - ըսաւ Սիմոնեան:

Ռուպերթ Քոչարեան «Հայաստան» դաշինքի առաջին ընդհանուր ժողովի ժամանակ յայտարարեց, թէ այս խորհրդարանական ընտրութիւններով ներքաղաքական ճգնաժամը Հայաստանի մէջ չէ յաղթահարուած, եւ իրենք պիտի պայքարին գայն յաղթահարելու համար: «Կրկնում եմ՝ այս նոյն իշխանական թիւը մնացել է իշխանութեան գլխին, ուրեմն ճգնաժամի պատճառը չի յաղթահարուել»:

Քոչարեանի միւս յայտարարութիւնները Ալէն Սիմոնեան հակասական որակած է, Հաղորդի ու Շուշիի կորուստին վերաբերող Քոչարեանի մեկնաբանութիւններուն հակադարձած է՝ ժամանակին Մեղրիի շուրջ ունեցած Քոչարեանի պայմանաւորուածութիւններով.



Աժ փոխնախագահ՝ Ալէն Սիմոնեան

«Խոհանոցային մակարդակի գրոյցները մի մարդու կողմից, ով Մեղրին էր պատրաստուում յանձնել Ատրպէյճանին եւ այլն, ով 5 հազար գործ է ասում՝ հաշուի չառնելով մարդկանց յոյզերը, ով որ մարդկանց վիրաւորում եւ մեղադրում է այն բանի մէջ, որ իրեն չեն ընտրել, տարբեր ձեւակերպումներով փորձում է նուստացնել այն 700 հազար մարդկանց, ովքեր գնացել եւ քուէարկել են «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեանը, միեւնոյն ժամանակ ինքը բացատրում է, թէ ինչի են քուէարկել, իր մեկնաբանութեամբ, եւ միեւնոյն ժամանակ իրենք դիմում են Սահմանադրական դատարան՝ անվաւեր ճանաչելու», - շեշտեց Ալէն Սիմոնեան:

«Իշխանութիւնը Իր Գործողութիւններուն Գնահատական Տալու Անհրաժեշտութեան Առաջ Կանգնած Է». Լեւոն Բարսեղեան

«Սա ոչ միայն դիրքորոշում է, այլեւ դիմում է իշխանութիւններին՝ ակնկալելով նրանց արձագանգը: Մեր ուղերձի գրաւոր թեքութիւնը նաեւ պաշտօնապէս ուղարկուելու է իշխանութիւններին, ակնկալելով պաշտօնական պատասխան»:

Այսօր՝ Մեծիա կեդրոն տեղի ունեցած «Քաղաքացիական հասարակութիւնը՝ Հայաստանի առաջնահերթ մարտահրաւէրների մասին. ի՞նչ լուծումներ են առաջարկուում» թեմայով մամուլի ասուլիսի ժամանակ, Գլխավոր լրագրողներու «Ասպարէզ» ակումբի խորհուրդի նախագահ՝ Լեւոն Բարսեղեան ներկայացուց քաղաքացիական հասարակութեան, մատուցած կազմակերպութիւններու կողմէն իշխանութիւններուն ուղղուած ուղերձը:

«Անկախ նրանից, թէ ՍԴ-ն ինչ կ'որոշի, չի որոշի՝ Հայաստանում ով է իշխանութիւն եւ ով կը լինի իշխանութիւն, այս ուղերձը իր մէջ ներառում է խնդիրներ, որոնք ըստ մեր 30 կազմակերպութիւնների կարծիքի Հայաստանի հիմնական մարտահրաւէրների խմբից են եւ այս ուղերձների բովանդակութիւնը կախուած չէ իշխանութեան ով լինելուց: Ուղղակի մենք այս ուղերձում ասում ենք, որ քուէարկութեան, ընտրութիւնների արդիւնքում ՔՊ-ն ստացել է ձայների մեծամասնութիւնը եւ մենք դիմում ենք խորհրդարանում վճռական ձայն ունեցողին: Մենք յոյս չենք յայտնում, մենք չենք գրում, որ հաւատում ենք... այդ լիբիկայից հեռու ուղերձ է սա», - նշեց Բարսեղեան:

Ուղերձը հրապարակուած է մի քանի օր առաջ: Բարսեղեանի խօսքով՝ այստեղ մօտ 10 թիրախներ նշուած են, որոնք կը համարուին շատ կարեւոր եւ հրատապ՝ կարճաժամկէտ եւ միջմաթամկէտ հեռանկարով լուծելի:

«Այս ուղերձը մշակուել է 10 օրից աւելի, անընդհատ քննարկել ենք, տարբեր գաղափարներ են եղել, խմբագրուել է, վերամշակուել, ի վերջոյ հրապարակուել է: Արձագանգը հետաքրքիր է մեզ,



«Ասպարէզ» ակումբի խորհուրդի նախագահ՝ Լեւոն Բարսեղեան

քանի որ այստեղ նշուած խնդիրների այն մասը, որը պատերազմի հետեւանքների հետ ուղիղ կապ չունի, խօսուել է, քննարկուել, առաջարկուել ու պահանջուել է դեռ անցած 3 տարիների ընթացքում: Դրանց ընդամէնը աւելացուել են պատերազմի անմիջական հետեւանքների մեղման կամ վերացման առաջարկները», - նշեց պարոն Բարսեղեան:

Ըստ Բարսեղեանին՝ եթէ անցեալ 3 տարիներուն իշխանութիւնները դրսեւորէին առաւել վճռականութիւն եւ իմաստութիւն ու այդ խնդիրներու մեծ մասը սկսէին աւելի արդիւնաւէտ լուծել, գուցէ անոնք այս ուղերձին մէջ տեղ չգտնէին. «Ապօրինի գոյքերի վերադարձ, անցումային արդարադատութիւն, քաղաքական գնահատականի պահանջ եւ այլն: Ցաւօք, մենք նկատելով, որ այդ ամբողջը մնաց, դուրսէն տեղում եւ լրացուցիչ խնդիրների պատճառ դարձաւ ՀՀ-ի համար, դրանք նոյնպէս այստեղ մատնանշեցինք»:

Պարոն Բարսեղեանի խօսքով՝ իշխանութիւնը ինքնազնահատականի կարիք ունի՝ մինչեւ 2020 թուականի գործունէութեան մասին. «Մենք համարում ենք, որ իշխանութիւնն իր գործողութիւններին նոյնպէս գնահատական տալու անխուսափելի անհրաժեշտութեան առաջ է կանգնած»:

ՍԴ Յուլիս 9-ին Կը Քննէ Ընտրութիւններու Արդիւնքները Վիճարկող Դիմումները

Սահմանադրական Դատարանը (ՍԴ) որոշած է Յուլիս 9-ին քննել արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքները վիճարկող 4 դիմումները:

ՍԴ-ն որոշած է միաւորել «Հայաստան» եւ «Պատիւ ունեմ» դաշինքներու, «Զարթօնք» եւ «Հայոց հայրենիք» կուսակցութիւններու դիմումները եւ քննել դատարանի նոյն նիստին, քանի որ կը վերաբերին նոյն հարցին:

Դատաքննութիւնը պիտի կատարուի բանաւոր ընթացակարգով: Գործով գեկուցող նշանակուած է Սահմանադրական Դատարանի դատաւոր Էտկար Շաթիրեան:

Որպէս պատասխանող կողմ դատաւարութեան ներգրաւուած է կեդրոնական ընտրական յանձնաժողովը, իսկ որպէս յարակից պա-

տասխանողներ՝ ՀՀ դատախազութիւնը, ոստիկանութիւնը եւ Հեռուստատեսութեան եւ ռատիոյի յանձնաժողովը:

Յունիս 20-ին կայացած քուէարկութեան արդիւնքները բարձր դատարանի մօտ վիճարկած են ինչպէս խորհրդարան անցած Ռուպերթ Քոչարեանի գլխաւորած «Հայաստան» եւ երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեանի սատարած «Պատիւ ունեմ» դաշինքները, այնպէս ալ անցողիկ շեմը չյաղթահարած «Զարթօնք» եւ «Հայոց հայրենիք» կուսակցութիւնները:

Սահմանադրական Դատարանը մերժեց նաեւ կարգ մը դատաւորներու ինքնաբացարկ ներկայացնելու միջնորդութիւնները ու բոլոր ինը դատաւորները պիտի մասնակցին հարցի քննութեան:

ԼՈՒՐԵՐ

Ան Քարտուղարը Չասին Ըսած Ե՝ Ստեղծուած Իրավիճակը Կարելի Զէ Որակել Որպէս Միջադէպ



Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան եւ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Սթանիսլավ Զաս

Հայաստանի Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Արմէն Գրիգորեան հեռախօսազրոյց ունեցած է ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Սթանիսլավ Զասի հետ՝ իր մտահոգութիւնը յայտնելով անոր՝ վերջին յայտարարութեան որոշ ձեւակերպումներու եւ գնահատականներու կապակցութեամբ:

Անվտանգութեան խորհուրդի գրասենեակէն յայտնած են, որ Արմէն Գրիգորեան համոզմունք յայտնած է, որ ստեղծուած իրավիճակը կարելի չէ որակել որպէս միջադէպ, քանզի արդէն տեւական ժամանակ է, ինչ Ատրպէյճանի զինծառայողները չեն լքեր Հայաստանի ինքնիշխան տարածքը:

Արմէն Գրիգորեան անգամ մը եւս շեշտած է, որ ՀԱՊԿ քարտուղարութեան մակարդակով կատարուող

ձեւակերպումներու հարցով անհրաժեշտ է ցուցաբերել զսպուածութիւն՝ իրավիճակի հանգուցալուծման ուղղուած կառուցողական ջանքերը հարուածի տակ չդնելու համար:

Զրոյցի աւարտին, Արմէն Գրիգորեան ընդգծած է, որ հայատրպէյճանական սահմանին տիրող իրավիճակին տեղւոյն վրայ ծանօթանալու համար նպատակայարմար է կազմակերպել ՀԱՊԿ քարտուղարութեան այց:

ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար՝ Զասը օրերս յայտարարած էր, թէ Հայաստանի հարաւի իրավիճակի սրումը՝ Ատրպէյճանի հետ նոր սահմանի հաստատման կապակցութեամբ, «սահմանային միջադէպ» է եւ չի համապատասխաներ ՀԱՊԿ հաւաքական պաշտպանութեան կանոնադրութեան դրոյթներուն:

«Էրտողան Խորտակած Ե Թուրքիոյ Տնտեսութիւնը». Կարօ Փայլան

Թուրքիոյ քրտամէտ «Ժողովուրդներու դեմոկրատական» կուսակցութեան (HDP-ՃԴԿ) տնտեսական գծով փոխնախագահ, մեծլիսի պատգամաւոր՝ Կարօ Փայլան խօսած է Թուրքիոյ՝ նախագահական համակարգի անցնելէն յետոյ անցեալ 3 տարիներու տնտեսական ցուցանիշներու մասին, հաղորդած է Ermenihaber-ը:

Հայ պատգամաւորը չի շեշտուցած է Թուրքիոյ նախագահ՝ Ռէճեպ էրտողանի խօսքերը այն մասին, որ նախագահական համակարգին անցնելէն յետոյ երկրի տնտեսութիւնը թուիչք պիտի արձանագրէ, ապա ներկայացուցած է շարք մը ցուցանիշներ:

Ըստ այդմ՝
- Թրքական լիրան տոլարի նկատմամբ արժեզրկուած է՝ 4.55-էն հասնելով 8.70 լիրա/1տոլար ցուցանիշի:

- Թուրքիոյ տնտեսութիւնը աշխարհի մեծ տնտեսութիւններու շարքի 18-էն նահանջած է 20-րդ հորիզոնական:

- Ազգային համախառն եկամուտը 860 միլիարդ տոլարէն նուազած է 700 միլիարդ՝ մէկ շունչի հաշուով 10600 տոլարէն նուազելով 8500-ի:

- 2825 լիրա (326 տոլար) կազմող նուազագոյն աշխատավարձը աւելի ցած է, քան 2865 լիրա (330 տոլար) կազմող նուազագոյն գամբիւրի պարունակութիւնը:

- 2018-ին 29 միլիոն 265 հազար կազմող աշխատողներու թիւը 2021-ի ապրիլին կազմած է 28 միլիոն 83 հազար:



Թուրքիոյ խորհրդարանի պատգամաւոր՝ Կարօ Փայլան

- Նախագահական համակարգի 3 տարուայ մէջ գործազուրկներու թիւը 10.8%-էն հասած է 13.9 միլիոն-ի՝ հատելով 10 միլիոնը:

- Թուրքիոյ վիճակագրական ծառայութեան 2021-ի Յունիսի տուեալներով՝ սպառողի համար գնաճը եղած է 17.5%, իսկ արտադրողի համար՝ 42.8%: Ընդհանուր գնաճի տոկոսը 30-էն բարձր եղած է:

- 3 տարուայ մէջ ելեկտրականութիւնը թանկացած է 97, կազմ՝ 93 տոկոսով:

Փայլան այս ամէնը կապած է էրտողանի «մէկ մարդու ռեժիմի» հետ՝ չի շեշտելով տնտեսութեան վերաբերեալ էրտողանի յայտնի արտայայտութիւնը՝ «Տնտեսութեան պատասխանատուն անձամբ ես եմ»:

Հայաստանը Տարին Կը Փակէ 6 Տոկոս Տնտեսական Աճով. Փաշինեան



Հայաստանի կառավարութիւնը իր նիստի ընթացքին

Այս տարի Հայաստանը տնտեսութիւնը կը փակէ 6 տոկոս տնտեսական աճով՝ գրեթէ երկու անգամ աւելի, քան կառավարութիւնը կը սպասէր անցեալ տարուայ վերջը՝ 3.2 տոկոս:

Այս մասին կառավարութեան այսօրուայ Յուլիս 1-ի նիստի սկիզբը յայտարարեց վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանը. - «2021 թուականի համար պիտուած էի նախագծով կանխատեսուած էր 3,2 տոկոս տնտեսական աճ, բայց գոհունակութեամբ պիտի նշեմ, որ չընթացս տնտեսական աճի կանխատեսումները վերանայուած են դէպի վերեւ: Եւ հիմա 2021 թուականի համար կանխատեսուած է 6 տոկոս տնտեսական աճ: Բայց կարելոր է, որ մենք այդ ցուցանիշներին զուգահեռ բաւական յաջող, ինչպէս արդէն ասել եմ, իրականացնում ենք պետական պիտուած էի եկամտային մասի հաւաքարձումները, եւ այդ առումով ունենք կիսամեակի գերակատարում»:

Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ՝ Էտուարտ Յովհաննիսեանի խօսքով, այս տարուայ առաջին կիսամեակին հաւաքուած է 750,2 միլիարդ դրամ հարկ, մինչդեռ նախատեսուած էր 697,7 միլիարդ դրամ: Այսինքն՝ ՊԵԿ-ը կարողացած է ծրագրուածէն

աւելի հաւաքել 52,5 միլիարդ դրամ: Համեմատութեան համար նշենք, որ անցեալ տարուայ առաջին կիսամեակին ՊԵԿ-ը հաւաքած էր 680,3 միլիարդ դրամ, 2019-ին՝ 713,4 միլիարդ, իսկ 2018-ին՝ 572,9 միլիարդ դրամ:

Գործադիրի նիստէն յետոյ Տնտեսական նախարարի պաշտօնակատար՝ Վահան Քերոբեան լրագրողներուն չի շեշտուց, երկնիշ տնտեսական աճով տարին փակելու նախկին իր յայտարարութիւնները եւ ընդգծեց, որ նոյնիսկ 6 տոկոս տարեկան աճը բաւական պահպանողական է, եւ 2021 թուականին երկնիշ աճ ունենալը կը մնայ ծրագրի ներքին. - «Արդէն վերջին երկու շաբաթուայ ընթացքում համարեա բոլոր միջազգային ֆինանսական կազմակերպութիւնները, Կեդրոնական դրամատուներ եւ արդէն նաեւ Կառավարութիւնը ճշգրտել են իրենց կանխատեսումները՝ հայպէս բարձրացնելով այն: Ես կարծում եմ, որ սա շատ լաւ նշան է, եւ պէտք է ձեռնարկատիրութիւնը հասկանայ, որ ընդհանուր շուկայի նկատմամբ, կամ տնտեսութեան նկատմամբ կանխատեսումները բաւականին դրական են, եւ օգտագործեն այս հնարաւորութիւնները՝ ընդլայնելու իրենց ներդրումները, ընդլայնելու իրենց գործունէութիւնը»:

Վերջին 30 Տարիներուն 1.7 Միլիոն Արտագաղթած են Հայաստանէն

Հայաստանի գաղթականական հարցերու տնօրէն Գագիկ Եկանեանի համաձայն 1.7 միլիոն հայեր մեկնած են Հայաստանէն:

«Սթեթիկ Արմէնիա»-ին տուած հարցազրոյցին կ'իմանանք թէ արտագաղթի իր գագաթնակէտին հասած է 1992-1994 եւ Հայաստանէն արտագաղթած են բնակչութեան 30% տոկոսը:

Գաղթականներու մեծամասնութիւնը՝ 1.1 միլիոն մեկնած է Ռուսաստան, 150,000ը մեկնած է ԱՄՆ, 130,000ը գացած է Եւրոպա, իսկ մնացեալները մեկնած են տարբեր երկրներ՝ Նոր Զելանտա, Իսրայէլ, Աւստրալիա եւ Սպանիա: 1992-1994 Հայաստանէն արտա-

գաղթած է 600,000 հոգի, այսինքն բնակչութեան մօտ 16%ը:

Կացութիւնն անփոփոխ մնացած է 2002-2007 արտագաղթած է 45,000 հոգի: Իսկ 2016-2018 3,500-4000:

2018էն ետք արտագաղթողներու մասին լուրջ ուսումնասիրութիւն մը չէ կատարուած տակաւին:

Հայաստանի մէջ նորածիններու թիւը միշտ աւելի բարձր եղած է քան մահացողներունը: Իսկ վերջին տարիներուն ծնունդներու թիւը նուազած է, 1980-ական թուականներուն տարեկան մօտ 90,000 երախայ ծնած է: Ներկայիս այս թիւն իջած է 12-15,000ի:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

Հայ-Ամերիկեան Յարաբերութիւններու Հիմքին Մէջ Կան Ընդհանուր Արժէքներ. Փաշինեանը Շնորհաւորած է Ծօ Պայտընին ԱՄՆ Անկախութեան Տօնի Առթիւ

Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը շնորհաւորական ուղերձ չղած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ ծօ Պայտընին՝ Անկախութեան տօնի առթիւ:

Ուղերձին մէջ նշուած է. «Զերմօրէն շնորհաւորում եմ Ձեզ եւ Ամերիկայի բարեկամ ժողովրդին՝ Անկախութեան օրուայ առիթով»:

Անկախութեան հռչակագրով հիմնադրուող հայրերը ԱՄՆ-ի ժողովրդին ու համայն մարդկութեանը ժառանգութիւն են թողել պետականաշինութեան, ժողովրդավարութեան եւ հիմնարար ազատութիւնների վեհ գաղափարները:

Ուրախ ենք, որ Ձեր վարչակազմը վերահաստատել է իր յանձնառութիւնը ժողովրդավարութեան ամրապնդման, օրէնքի գերակայութեան, մարդու իրաւունքների ու հիմնարար ազատութիւնների պաշտպանութեան հարցերում կրկին ստանձնելու միջազգային առաջատարի դերը:

Այդ արժէքները, որոնք կիսում է նաեւ հայ ժողովուրդը, ընկած են մեր յարաբերութիւնների հիմքում: Այդ առթիւ ցանկանում եմ երախտագիտութիւն յայտնել ԱՄՆ-ին՝ Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումներին երկարած աջակցութեան ամուր ձեռքի համար:

Վերջին ժամանակներս համայն մարդկութիւնը դիմակայում

է լուրջ մարտահրաւէրների՝ համավարակ, կլիմայի փոփոխութիւն, հակամարտութիւններ ու պատերազմներ: Մենք բարձր ենք գնահատում միջազգային հանրութեանը, այդ թուում՝ Հայաստանին, համավարակի դէմ պայքարում ցուցաբերած ֆինանսական ու բժշկական անգնահատելի օժանդակութիւնը:

Մեծապէս կարեւորում ենք ԱՄՆ-ի միջնորդական ակտիւ դերակատարութիւնը եւ ԱԶԿ ՄԽ համախաղաղութեան շրջանակում եւ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի յստակեցման ուղղութեամբ Ձեր երկրի անշեղօրէն արտայայտուող յստակ դիրքորոշումը: Վստահ եմ, որ եւ ԱԶԿ ՄԽ-ն քի խմբի համախաղաղութեան համատեղ ջանքերով հնարաւոր կը լինի հասնել Արցախի խնդրի համապարփակ ու արդար կարգաւորմանը:

Հայաստանը պատրաստակամ է առաւել խորացնելու եւ ընդլայնելու մեր երկկողմ յարաբերութիւնները ռազմավարական երկխօսութեան շրջանակում: Լիալոյս եմ, որ ապագայում կ'արձանագրենք փոխհասկացող համագործակցութեան նորանոր ձեռքբերումներ:

Թոյլ տուէ՛ք մէկ անգամ եւս շնորհաւորել Ձեզ ու Ամերիկայի բարեկամ ժողովրդին՝ մղթելով բարօրութիւն, զարգացում եւ շուտափոյթ յաղթանակ քորոնավիրուսի դէմ»:

Ոչ Եւս Է Աշխարհահռչակ Տուտուկահար Ծիւան Գասպարեանը

Վախճանած է աշխարհահռչակ տուտուկահար՝ ծիւան Գասպարեան: Այս մասին Դիմատետրի գրառմամբ յայտնած է տուտուկահարի թոռը՝ ծիւան Գասպարեան կրտսերը:

«Շատ մեծ ցաւով եմ գրում իմ մեծ կորստի մասին: Աստուած հոգիդ լուսաւոր երկնքում պահի», - գրած է ծիւան Գասպարեան կրտսերը:

Աշխարհահռչակ տուտուկահարը 92 տարեկան էր:

Ծիւան Գասպարեան խորհրդային Հայաստանի ժողովրդական արուեստագէտ էր, Հայաստանի եւ Գանատայի երաժշտական հիմնարկների անդամ: Թողարկած է աւելի քան երկու տասնեակ ձայնասկաւառակ, նուագած է հազարաւոր համերգներու ընթացքին, մասնակցած համաշխարհային ճանաչում վայելող շարժապատկերներու երաժշտութեան ստեղծման: Արժանացած է միջազգային հեղինակաւոր մրցանակներու, անոնց կարգին՝ «Ոսկէ Կլոպի», պարգեւատրուած է «Մետրոպ Մաշտոց» մետալով, «Հայրենիքին մատուցած ծառայութիւնների համար» առաջին աստիճանի շքանշանով եւ Հայաստանի Հանրապետութեան այլ պետական ու գերատեսչական պարգեւներով, արժանացած է Երեւանի պատուաւոր քաղաքացիի կոչման:

Հայաստանի վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան եւ նախագահ՝ Արմէն Սարգսեան ցաւակցական հեռագիրներ չղած են ծիւան Գասպարեանի մահուան կապակցութեամբ:

Վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ՝ Նիկոլ Փաշինեանի ուղերձին մէջ մասնաւորապէս ըսուած է. - «Խոր ցաւով տեղեկացայ աշխարհահռչակ տուտուկահար ծիւան Գասպարեանի մահուան մասին: Անուանի վարպետը ողջ ստեղծագործական գործունէութեան ընթացքում հայկական ծիրանափողի փառքը տարածել է աշխարհով մէկ՝ հանդէս գալով հեղինակաւոր բազմաթիւ բեմերում, հայկական երաժշտութեան հնչիւնները ներկայացնելով յայտնի շարժապատկերներում, համագործակցելով հռչակաւոր երգահաններին, համաշխարհային ճանաչում ունեցող երաժիշտների հետ: Մեր ողջ ժողովուրդը եւ աշխարհի երաժշտասէր հանրութիւնը ծիւան Գասպարեանին, որպէս մտաւորական եւ հայի բացառիկ կերպար, դասել է համաշխարհային արուեստակաւանէն ներս ընդունուած համապատասխան բանաձեւով կը դատապարտուին 1915 թուականի Յեղասպանութիւնը, տասնամեակներ շարունակուող Ատրպէյճանի հայտնեաց քաղաքականութիւնը, 2020 թուականին Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ միջազգային ահաբեկիչներու կողմէ Արցախի Հանրապետութեան դէմ սանձազերծուած լայնամասշտապ պատերազմը՝ գանոնք փաստօրէն դիտարկելով որպէս մեկ ցեղասպան քաղաքականութեան բաղադրիչներ:

«Փաստաթուղթը հանդիսանում է բարոյականութեան, մարդասիրութեան եւ քաղաքական ազնուութեան օրինակելի դրսեւորում:



Աշխարհահռչակ տուտուկահար՝ Ծիւան Գասպարեան

տի մեծերի շարքում, որով մենք հպարտացել ու ոգեշնչուել ենք»:

«Ուրիշըմ Սարոյեանը ծիւան Գասպարեանի նուագը լսելուց յետոյ ասել էր՝ «Ծիւան Վան, սա նուագ չէ, այլ աղօթք է»: Վարպետի կատարումներով աղօթքներն ընդմիշտ կը մնան ոչ միայն հայ, այլև ողջ աշխարհի արուեստասէրների սրտերում ու յիշողութիւններում», - նշած է Փաշինեան:

Նախագահի աշխատակազմի հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդմամբ՝ Արմէն Սարգսեանի ուղերձին մէջ մասնաւորապէս ըսուած է. - «Խոր ցաւով տեղեկացայ հայկական տուտուկի առասպել, ժողովրդական արուեստագէտ ծիւան Գասպարեանի մահուան մասին: Նրա արուեստը, հոգու խորքից դուրս յորդող այդ գագաջացունց մեղեդիները վաղուց անցել են իրականութեան բոլոր սահմանները եւ հատել յաւերժութեան գիծը: Ծիւան Գասպարեանը կախարդական սրինգին տիրապետելու իր անկրկնելի վարպետութեամբ մեր ժողովրդական երաժշտութիւնը դուրս հանեց միջազգային բեմահարթակ, աշխարհի բեմեր եւ համաշխարհային կինո՝ տասնամեակներ շարունակ մեր ազգային մշակույթը հասանելի ու հասկանալի դարձնելով նաեւ օտար հանդիսատեսին»:

«Տուտուկի մեծ վարպետը մեր ժամանակակից մշակույթի յենասիւններից մէկն էր, ում անուան հետ է կապուած երաժիշտների եւ յատկապէս տուտուկահարների մի ողջ սերնդի ստեղծագործական եւ աշխատանքային գործունէութիւնը», - նաեւ նշած է նախագահ Սարգսեան:

Փոխիրաձգութեան Հետեւանքով Հայկական Կողմը Ունի 1, Ատրպէյճանական Կողմը՝ 2 Վիրաւոր



Գեղարքունիքի մարզի վերին Շորժա գիւղի սահմանային հատուածը Ատրպէյճանը փոխհրաձգութիւն հրահրած է:

«Արմէնփրէս»-ի հարցին ի պատասխան այս մասին ըսաւ Ձինուած ուժերու գլխաւոր շտաբի վարչական մարմնի տեղեկատուական բաժնի պետ, գնդապետ՝ Սամուէլ Ասատրեան՝ անդրադառնալով տարածուած այն տեղեկութեան, որ հայ-ատրպէյ-

ճանական սահմանին հայ եւ ատրպէյճանցի զինծառայողներու միջեւ փոխհրաձգութիւն տեղի ունեցած է:

«Ատրպէյճանական զօրքերն իրենք են հրահրել փոխհրաձգութիւնը: Հայկական կողմը ունի մէկ թեթեւ վիրաւորում ստացած զինծառայող: Մեր տեղեկութիւններով՝ ատրպէյճանական կողմը ունի երկու վիրաւոր զինծառայող», - ըսաւ Ասատրեան:

Արցախի ԱԳՆ-ը Ողջունած է Նիւ Երրգի Նահանգի Կողմէ Արցախի Անկախութեան Ծանաչումը

Արցախի արտաքին գործոց նախարարութիւնը ողջունած է ԱՄՆ-ի Նիւ Ճորջի նահանգի կողմէ Արցախի ինքնորոշման իրաւունքի

եւ անկախութեան ճանաչումը: Արցախի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը մասնաւորապէս նշած է, որ նահանգի Մերա-

արժէքներ, որոնք տեւական եւ կայուն խաղաղութեան կարեւորագոյն գրաւականներն են: Երախտագիտութիւն ենք յայտնում Նիւ Ճորջի նահանգի հանրութեանը, օրէնսդիր մարմնին, Սփիււքի կառույցներին եւ ամերիկահայ համայնքին՝ արդարութեան համար մղուող պայքարում ցուցաբերած նուիրուածութեան ու վճռականութեան համար», - ըսուած է յայտարարութեամբ:

Յիշեցնենք, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նիւ Ճորջիի Մերալուտականը երէկ ընդունած է Արցախի ճանաչման մասին բանաձեւ՝ դառնալով ԱՄՆ-ի՝ Արցախի անկախութիւնը ճանաչող 10-րդ նահանգը:

Նիկոլ Փաշինեան Շնորհաւորական Ուղերձ Յղած Է ՀՀ Սահմանադրութեան Օրուայ Առիթով

ՀՀ վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան ուղերձ յղած է ՀՀ Սահմանադրութեան օրուայ առիթով.

«Սիրելի հայրենակիցներ, սիրելի ժողովուրդ,

շնորհաւորում եմ բոլորիս Յուլիսի 5-ի՝ Սահմանադրութեան օրուայ առիթով: 2021 թուականի Յուլիսի 5-ը դիմաւորում ենք կատարելապէս նոր պայմաններում՝ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան ոչ փոփոխելի 2-րդ յօդուածը լրումին հասած: Ըստ այդ յօդուածի՝ իշխանութիւնը Հայաստանի Հանրապետութիւնում պատկանում է ժողովրդին, եւ ժողովուրդն իր իշխանութիւնն իրականացնում է ազատ ընտրութիւնների միջոցով:

2021 թուականի Յունիսի 20-ի արտահերթ խորհրդարանական ընտրութիւններն ի ցոյց դրեցին, որ տասնամեակների պայքարից յետոյ սահմանադրական այս դրոյթը Հայաստանում հաստատուած է անշրջելիօրէն: Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացի այսօր տեսնում է, գիտի, որ ինքը որոշիչ ուժ է, այնպէս, ինչպէս նախատեսուած է մեր երկրի Սահմանադրութեամբ:

Խորհրդարանական արտահերթ ընտրութիւնները, ըստ այդմ, ցոյց տուեցին, որ վերջին երեք տարիներին մեր սահմանադրական գիտակցութեան մէջ տեղի են ունեցել խորքային փոփոխութիւններ, եւ Երրորդ հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամ ընտրութիւնները դարձան ներքաղաքական ճգնաժամը յաղթահարելու եւ ոչ թէ ճգնաժամ յարուցելու միջոց: Սա սահմանադրական իրականութիւն ստեղծելու մեր առաքելութիւնը նոր թափով կեանքի կոչելու ամուր նախադրեալներ է ստեղծում:

Մեր առաջիկայ անելիքների

առանցքը ձեւակերպուած է մեր երկրի Սահմանադրութեան նախաբանում եւ առաջին յօդուածում: Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան, ժողովրդավարական, ընկերային, իրաւական պետութիւն լինելու նիւթականացման շուրջ պիտի համախմբենք մեր ազգային լաւագոյն ներուժը, եւ այդ համախմբումը պիտի տեղի ունենայ համաձայն ժողովրդի կամքի եւ ոչ թէ ի հեճուկա նրա:

Մեր առաջիկայ անելիքների առաջնահերթութիւնների շարքում արտաքին, սահմանադրական անվտանգութեան օրակարգերն են, այդ օրակարգերը սպասարկելուն կոչուած պետական հիմնարկների բարեփոխումը եւ կայացումը: Այս օրակարգերի պատշաճ սպասարկումն է, որ պիտի ապահովի մարդու, մարդկային ներուժի զարգացման համար անհրաժեշտ իրաւական, ընկերային, կրթական, ենթակառուցուածքային պայմանների հասանելիութիւնը, եւ այս օրակարգի վրայ պիտի աշխատենք օրնիբուն՝ մեր երկրի անվտանգութիւնն ու հզօրութիւնը, մարդու եւ քաղաքացու ազատութիւնը, երջանկութիւնն ու բարեկեցութիւնը որպէս նպատակ ունենալով:

Այս ընթացքում, ակնյայտօրէն, չի յաջողուի խոսափել մեր երկրի կառավարման համակարգի շուրջ քննարկումներից, բայց այս կարեւորագոյն հարցում էլ պիտի առաջնորդուենք «կտրելուց առաջ եօթ անգամ չափելու» սկզբունքով:

Սիրելի հայրենակիցներ, սիրելի ժողովուրդ,

խոնարհուելով յանուն հայրենիքի, յանուն ինքնիշխան պետութեան իրենց կեանքը զոհած մեր բոլոր եղբայրների ու քոյրերի յիշատակի առաջ՝ շնորհաւորում եմ բոլորիս Սահմանադրութեան օրուայ՝ Յուլիսի 5-ի առիթով»:

Եւրոպական Միութիւնը Կը Պատրաստուի

Շարունակուած էջ 1-էն

Այս առումով, ըստ փաստաթուղթի, առաջնահերթութիւնը տրուած է այն ձեռներէցներուն, որոնք կ'աշխատին բնութիւնը պահպանող տեխնոլոգիաներով, յատկապէս շրջաններու մէջ, ինչպէս նաեւ այն պիզնէսներուն, որոնց դեկավարները կանայք են:

Երկրորդ ծրագիրով կը նախատեսուի աշակցիլ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման եւ հաղորդակցութեան, ընդգծելով, որ Հայաստանի ազգային օրակարգի առաջնահերթութիւններէն է Հիւսիս-հարաւ միջանցքի շահագործումը, որը հնարաւորութիւն կու տայ ապահովել ելք դէպի միջազգային առեւտրային ուղիներ եւ շուկաներ:

«Տրանսպորտային ենթակառուցուածքներու բարելաւումը հնարաւորութիւն կու տայ սերտացնել կապը մարզերու միջեւ, ինչպէս նաեւ Հայաստանի կապը հարեւան երկրներու եւ Եւրամիութեան հետ», - կ'ըսէ Եւրոպական Յանձնաժողովը, ակեցնելով. «Այս ուղղութեամբ Եւրամիութեան ներդրումը կը կեդրոնանայ հիւսիս-հարաւ մայրուղու տակաւին չկառուցուած հատուածներու, որոնց շարքին՝ Սիսիան-Քաջարան ճանապարհի վրայ»: Այս ծրագրի իրագործման համար կը նախատեսուի 600 միլիոն Եւրօ յատկացնել, որ կը տրամադրուի նաեւ հարաւի մէջ նախատեսուած նոր»

Սիսիան-Քաջարան թունելի կառուցման:

Երրորդ ու չորրորդ ծրագիրները կը վերաբերին աշակցութիւն՝ նորարարութեան, գիտութեան, Հայաստանի հարաւային շրջաններու դիմադրողականութեան ամրապնդման պատերազմէն յետոյ ստացած հարուածներուն, պատերազմական զօտիէն տեղահանուածներու աշխատանքի ու կրթութեան կարիքներուն:

թիւն կրնա՞ք նշել միթէ: Այսքան համանման գուգահեռներ վերապրիլ, դժուար է հաւատալ: Եւ հեղինակին մաղթանքն է. «Եւ թող մեր ժողովուրդը հետեւի ձայնիդ, բոցի պէս ժայթքի երգը թոքերէն ցնծութեամբ եւ արցունքով, դրողագին ու ահեղ, կիրքերը դադրած, կարգապահ ու սիրալիկ. ե՛րգը, տէ՛ր, մեր երգը, տո՛ւր, որ երգենք մեր երգը. Հայաստան, ամէ՛ն բանէ վեր...»:

Առանց Տիրոջ ապաւինելու, միթէ կարելի չէ ունենալ մեր ազգային կարգախօսը՝ Հայաստան, ամէն բանէ վեր...:

Երկրորդ գրութիւնը կարօտագին գեղում մըն է հայերէնին շուրջ, որ կը սկսի այսպէս. «Երկար ատենէ ի վեր՝ հայերէն չեմ խօսած»: Յետոյ գրոցը մըն է կատուի մը հետ՝ հայերէնով: Կատուն հայերէն գրութեամբ թղթիկ մը կը բռնէ ճանկերով: Եւ հեղինակին կը հարցնէ. «Ինչո՞ւ հոս ինկեր է», ան կը պատասխանէ՝ «Մենք հիմա ինկած ենք ամէն կողմ»: Եւ երբ նիւթ կը դառնայ հայոց մասին եւ կատուն կ'ուզէ իմանալ մեր պատմութիւնը, հեղինակը կ'ըսէ՝ «Երկար պատմութիւն»: Ահա կատուին դիպուկ պատասխանը եւ այնքան համահունչ մերօրեայ իրականութեան. «Խօսքը ժամանակի կորուստ է, առարկեց կատուն, աչքերը բացիւնք: Եթէ կ'ուզէք յաջողիլ, մեզի պէս ըրէք: - Երբեք չխօսիլ: Եւ երբեք չխաղալ մուկերուն: Երբեք երախտագիտական զգացում չունենալ, ապերախտ ըլ-

Շար.ը էջ 15

Աւաղ

«Արժանիքները, որոնք մենք գնահատում ենք հաւասարապէս պատկանում են նաեւ մեզ. եւ նկատում ենք այն, ինչ ունենք ինքներս»:

Թորո

ՈՌԻԲԵՆ ՅՈՎԱԿԻՍԵԱՆ

Հայրենի մամուլը գրում է «Ընդամէնը երեկ էր, որ Մայր Աթոռը յայտարարութիւն տարածեց եւ ողջունեց Նիկոլ Փաշինեանի՝ հոգեւոր առաջնորդների հետ երկխօսութիւն սկսելու առաջարկը: Յայտարարութեան մէջ նաեւ նշուած էր որ եկեղեցին կողմ է եւ ամէն ինչ անելու է հանրային համերաշխութիւն ապահովելու համար»: Խօսքի կշիռն ու իմաստը լիարժէք հասկանալով անհնար է հարց չտալ թէ, ի՞նչ անհամերաշխութիւն կարող է լինել եկեղեցու եւ իշխանութեան միջեւ, եթէ իւրաքանչիւրը զբաղուի իր գործով եւ աւելորդ չէ յիշեցնել, որ մեր պատկանելի երկու կաթողիկոսները բազմից չվարանցին իրենց ենթակա կառուցներով շեշտադրել՝ վարչապետի հրաժարականի անհրաժեշտութիւնը, ի սփիւռս աշխարհի, որոնց շարքին յատուկ մոլեռանդ՝ Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Արքեպիսկոպոս Աջապահեանը այս առաւօտ իր, ֆէյսպուքի էջում գրել է. «էրմի-նիստանը յաղթեց Հայաստանին»: Ի՞նչ ամօթ եւ անկիրթ ստորութիւն երբ արքեպիսկոպոսը -այսպէս գոյահին արժանի բառապաշար է գործածում իր թեմին կամ հոտին որակելու եւ թերեւս զարմանալի չէ, քանի որ նոյն անձը վարչապետի այցելուութեան ընթացքին չէր ցանկացել ողջոյնին պատասխանել եւ ստիպել էր լքել եկեղեցին: Փաստօրէն այ՛ս ի՛ր կոչումին անարժան հոգեւորականը խնդիրներ ու-

նի իր իսկ բարոյական կեցուածքի հետ, կամ իր վերադաս ամենայն հայցի կոչին յարմարուելու միտում չունի, ուրեմն նրա հրաժարականի պահանջը իրաւացի է:

Գրեթէ վատահ եմ որ այս չարիքը եզակի չէ ...աւաղ: Պատկերը նոյնն է Անթիլիասում քանի որ այդ հաստատութեան միաբանները տարբեր երկրներից միաբերան վարչապետի անյապաղ հրաժարականը պահանջեցին եւ կարծում եմ այժմ որոշ ետ քայլ եւ շտկումներ անելը ոչ միայն աւելորդ չէ՝ այլ պարտադիր: Յիշեցնեմ, որ դիւանապետ Արշակ եպս. Խաչատրեանը յողուածներով եւ հարցադրոյցներով ապականեց իր կարգը: Այն էլ ասեմք որ այնտեղից ընտրութիւնների առիթով դեռ արձագանգ չի եղել թերեւս սպասում են Քոչարեանի կամ նրա դաշնակիցների հրահանգին: Ո՞վ գիտի. ինչե՞ր ենք տեսել եւ դեռ կը տեսնենք:

Կարեւոր մի երեւոյթի մասին կ'ուզեմ անազանգել մեր ընթերցողին, հասարակայնութեանը եւ մասնաւորապէս նոր գործի անցնող պետական գործիչներին, որ 54 տոկոս քուէատուփերի նիշով բոլոր խնդիրները չեն լուծուում ինքնաբերաբար քանզի, հաստատուած իրականութիւն է բազմաթիւ երկրներում, որ օրինական պաշտօնեաների հետ՝ նրանց կողքին տեղաւորուած են անհատներ, երբեմն անշուք եւ անդէմ, բայց նպատակային եւ ժամանակի ընթացքին կազմում են «Խորքային իշխանութիւն» (Etat profond) երե-

ւոյթը, որ յատուկ է արեւմտեան շատ երկրներին եւ ժամանակին ռուսները նրանց անուանում էին չինովնիկներ: Նրանք հինգերորդ շարասիւն չեն, բայց երբեմն եղած հրահանգները չեն կատարում կամ անում են իրենց հայեցողութեամբ: Դրա փայլուն օրինակն է մեր երկրում դատական համակարգը, որի կողքին կարելի է յիշել նաեւ բանակի սպայակոչուի դէպքերը վերջին պատերազմում եւ վերջապէս իր տեղը դեռ չգտած ՄԴ-ը:

Գովելի էր եւ բովանդակալից Փաշինեանի առաջարկը վերջ տալ թշնամական հայհոյանքներին եւ զանազան ամբաստանութիւններին, եղած ներուժը համախմբել մեր առջեւ դրուած դժուար լուծելի խնդիրներին դիմակայելու եւ այդ նպատակով նա խորհրդարանից դուրս մնացած ուժերի ղեկավարների հետ է հանդիպում, բայց ի՞նչ կը լինի նրանց պատասխանը գուշակելի չէ, մի կայստի է որ ոչ մէկը պատրաստ է հրաժարուել իր պատգամաւորի վիճակից եւ եթէ ընտրութիւնների ընթացքը եւ աւարտը մի ձեւով ցանկանանք ամփոփել, ապա ակնառու է որ, շատ լարուած, եթէ չասենք բիրտ ու թշնամական էին վերջին 10 օրերը: Բացակայ էին միայն զէնքեր, բայց իրար յօշոտելու ցանկութիւնը առկայ էր:

Եղաւ ինչ պիտի լինէր, որ անպասելի էր նախկինների համար, որ ջանք չէին ինսյել յաղթելու համար, բայց մեր հասարակայնութիւնը՝ պետութիւնը գրաւելու փորձերը իմաստօրէն դուրս շարտեց: Անհասկանալի մի երեւոյթ, որ չեմ կարողանում ըմբռնել, այն է թէ իր աւագակցութեամբ յազեցած անցեալով հանդերձ ինչպէ՞ս է. որ դեռ կան հայրենակիցներ, որ ողբում են Քոչարեանի ձախողումը, ո՞րն է նրա հմայքն ու հրապոյրը երբ

մոսկուաբնակ պիղծ հայատեաց լրագրողուհի Մարգարիտա Սիմոնեանը ֆէյսպուքի իր էջում գրել է. «Առաջադէմ հասարակութիւնը հարցնում է, թէ ինչու ոչինչ չեմ գրում հայաստանեան ընտրութիւնների մասին: Ի՞նչ գրեմ, որ իսպանական ամօթ եմ գգում»: Եթէ լուսահոգի մայրս լինէր պիտի ասէր. «Վարնոց, մենք հայկական ամօթ ենք գգում, որ դու եւ քո նմանները կան»: Նման մէկ ուրիշ մամուլի աղբանոցում քչփորող, ի՛ր «Մեղիափորձագէտ պլոգեր» տիտղոսով, որ այդպիսին գոյութիւն չունի, Տիգրան Քոչարեանը, որ նոյնիսկ անսխալ հայերէն չգիտի տեսիլքի մէջ գրում է՝ «Ռոբերտ Քոչարեանը փողոցը վերցրել է, խորհրդարան մտել է, մնում է կառավարութիւն վերցնելը»: Ուշագրաւ է այն երեւոյթը թէ նման մոլախոտեր որտե՞ղ են ծնուում, մեծանում եւ դաստիարակուում եւ ի՞նչ է նրանց ուզածը, որի պատասխանը Չարենցը գրել է դեռ 1929-ին՝

«...ժանգոտած սոււեր ձեռքերիդ պահած՝

Անկում էք կարդում իմ նոր աշխարհին:

Օ., դո՛ւք, ողբալի պնակալեզուներ,

Բռնակալների մի յետին քուրջում

Կծկուած՝ արդեօք կարո՞ղ էք տեսնել,

Թէ ինչո՞վ ենք մենք ապրում ու շնչում...»:

Համոզմունքս է որ այլախոհութիւնը սխալ չլինելով երկրի համար բարիք է եւ մտաւոր հարստութիւն, բայց կուրորէն կանչել աւագակցապետութեան սկզբունքներին եւ այն գովերգել ուրիշ անուն չունի՝ քան ստոր դաւաճանութիւն եւ հեռու է այլախոհի իմաստից: «ԱԿՕՍ»

S. S. Բաբգեն Ա. Կիլիկիայի Աթոռակից Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» Հատորը

ԴՈՎՏ. ՋԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵՆՆ

Այնթապէն Արմաշ

Կիլիկիոյ Աթոռակից S. S. Բաբգեն Ա. Կիլիկիայի Կաթողիկոս 152 տարի առաջ ծնաւ Այնթապ եւ վախճանեցաւ Անթիլիասի նորահաստատ Հայրապետանոցին մէջ 1936 թուին իր պատասխանատու պաշտօնը միայն հինգ տարիներ վարելէ ետք: Կաթողիկոսին երկամեակէն մին նախապէս վնասուած ըլլալով կանուխէն, Ա. պատերազմէն տարի մը առաջ, հարկ էր Ամերիկա մեկնիլ բուժման համար: Բաբգեն Ա. Կաթողիկոս 20-րդ դարու առաջին քառասնամեակի ամենէն ակնառու հոգեւորականը եղաւ իր խոր հաւատքով, բանասէրի եւ ուսուցչապետի հմտութեամբ, դառնալով մեծ ջատագովը Հայաստանեայց Մայր Եկեղեցւոյ, ըլլալով միանգամայն Հայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու հիմնադիրը:



«Ազգապատում»ի Կրտսեր Եղբայրը

S. S. Բաբգեն Ա. Կիլիկիայի Կաթողիկոսի գրական վաստակին գլուխ գործոցը եղաւ «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» մեծագիր հատորը, 1446 երկաւն էջերով, որ կը բովանդակէ Կիլիկիոյ 39 Կաթողիկոսներու լրիւ շարքը եւ յարակից պատմութիւնը 1441-1936 հինգ դարերու ընթացքին: Գաւազանագիրքը կը սկսի Գրիգոր Մուսաբեկեան Կաթողիկոսէն (1439-1451) ու կը հասնի մինչեւ Սահակ Բ. Խապայեան (1902-1939) եւ Բաբգեն Ա. Աթոռակից Կիլիկիայի (1931-1936) հեղինակ Կաթողիկոսը: Հատորը յետ մահու հրատարակութիւն մըն է, լոյս տեսած 1939-ին Անթիլիասի մէջ:

Հեղինակը հետեւած է իր բազմարդին ուսուցչին եւ Արմաշի Դպրեկանքի վերատեսուէ Մարգարիտ Պատրիարք Օրմանեանի «Ազգապատում»ի երեք հատորներուն, որոնց կրտսեր եղբայրը կարելի է համարել գալն՝ որպէս իսկական լրացուցիչը Օրմանեանի գործին: Սակայն չմոռնանք, ինչպէս մոռցած է Կիլիկիայի Կաթողիկոս, որ Օրմանեանի գործը գորքնադատած է Կիլիկիայի Կաթողիկոսներու վերաբերեալ «Ազգապատում»-ի յօդուածներուն առիթով, որ Օրմանեանի գործը ընդհանուր Հայ Եկեղեցւոյ վերաբերեալ ըլլալով, Կիլիկիոյ Կաթողիկոսներուն վերաբերեալ բաժինը բնականօրէն պիտի մնար երկրորդական: Մինչդեռ Կիլիկիայի միայն Կիլիկիոյ Կաթողիկոսներուն վրայ կեդրոնացած ըլլալով շատ աւելին գրած է անոնց մասին, վկայակոչելով ձեռագրաց յիշատակարաններ Դաւանադեցիէն սկսեալ մինչեւ Չամչեան եւ Ալիշան:

Երեք Բաժիններ

Ներկայ «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» հատորը երեք բաժիններ ունի, որոնցմէ առաջինը կ'ընթանայ Կաթողիկոսներու շարքով, երկրորդը իր երեք գիրքերով՝ պատմագիտական լուրջ ուսումնասիրութիւններով՝ «Էջմիածին եւ Սիս», «Սիս եւ Երուսաղէմ», «Աջ եւ Աջապահ» խորագիրներով, ինչպէս նաեւ յաւելուած մը՝ «Մանր ուսումնասիրութիւններ» եւ «Բնագիրներ»: Ներածական բաժինն մէջ «Ընդհանուր Ակնարկ»ով մը քննուած են Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աթոռանիստ հանգրուանները ու անոնց տեղափոխութեան պատմութիւնը մանրամասնօրէն, հիմնուած սկզբնաղբերներու տուեալներու վրայ: Հեղինակը քննած է թովմա

Մեծփեցի պատմիչի տեղեկութիւնները թէ ինչպէս «Կաթողիկոսութիւնը Կիլիկիոյ մէջ իբրեւ հետեւանք լատին շփումին, իր հմայքը կորսնցուցած էր յաջա Արեւելեան (Հայաստանի) վարդապետներուն»:

Մայր Աթոռին Վերջնական Փոխադրութիւնը


Բաբգեն Կաթողիկոս վերլուծած է Հայրապետական Աթոռին Կիլիկիայէն էջմիածին վերադարձի ներքին եւ արտաքին պատճառները, հարց տալով թէ ինչո՞ւ համար Գրիգոր Մուսաբեկեան Կաթողիկոս մերժեց էջմիածին փոխադրուելու պատուաբեր հրահրելով, «հաւանաբար ծեր էր եւ չուզեց շարժիլ իր տեղէն», մանաւանդ երբ տեսաւ որ, ըստ Մեծփեցի պատմիչին, Կիլիկիոյ «ի ներքին կողմանց եպիսկոպոսներէն չորսը, չուզեցին գինքն, եւ նամակներ գրեցին Արեւելեան վարդապետներուն եւ նոյն ինքն Մեծփեցիին, եւ Մուսաբեկեան Սիս մնաց ընկճելու համար իր հակառակորդները»:

Պարտք կը զգամ աւելցնել որ հատորին Բ եւ Գ մասերը պատմագիտական արժէք կը ներկայացնեն, ինչպէս «Էջմիածին եւ Սիս» յաւելուածը, 1441 թուին Կիլիկիոյ եւ էջմիածնի կաթողիկոսներու ներհակ շարժումը կանխող դէպքերու քննութեամբ յագեցած: Աթոռին էջմիածին վերադարձը, ինչպէս կը բացատրէ Բաբգեն Կաթողիկոս, Երեւանի պարսիկ Աղուպ Պէյին արտօնութեամբ կարելի եղած էր, «որովհետեւ նիւթական մեծ շահ մը կ'ապահովէր այդ կերպով իր գանձին համար», առանց սակայն երաշխաւորելու Հայաստանի բնիկ եւ վերականգնեալ Աթոռին վարկն ու ապահովութիւնը:

Աթոռին վերջնական փոխադրութեան ետին կար միշտ Հայաստանի Արեւելեան վարդապետներու նեցուկը, Հաղբատէն, Սանահինէն, Տաթեւէն եւ Գլաձորէն, որոնք այլեւս Կիլիկիան չէին ընդունել որպէս կեդրոն Հայոց Հայրապետութեան: Թող որ Երեւանի քաղաքական կացութիւնն ալ անկէ աւելի յուսալի չէր 1441 թուին: Բաբգեն Կաթողիկոս կը յիշեցնէ թէ «Քրիստոնեաներն էին որ պիտի վճարէին ծանր տուրքերն ու հարկերը» պահել կարենալու համար կաթողիկոսարանն ու Երեւանի եկեղեցիները, որուն համար հեղինակը ժամանակակից յիշատակարանէ մը դիպուկ խօսք մը կը մէջբերէ, թէ «Հայք կամաւոր հալածանքի կը դիմէին Աթոռը Սիսէն էջմիածին փոխադրելով»:

Կասկածելի Յարաբերութիւն Հռոմի հետ

Կիլիկիոյ Ազարիա Կաթողիկոսի մասին կարեւոր բաժին մը վերապահած է Բաբգեն Կաթողիկոս իր ծաւալուն հատորին մէջ, ուր յայտնի եղած է նաեւ Ազարիա Կաթողիկոսի Հռոմի հետ մշակած կասկածելի յարաբերութիւնը, որ ըստ Մարգարիտ Օրմանեան Պատրիարքին, ան ենթակայ մնացած է Հռոմի, եւ ըստ Բաբգեն Կաթողիկոսի ընդհակառակը՝ պաշտպան Հայ Եկեղեցւոյ: Հռոմի հետ Ազարիայի յարաբերութիւնը կը հանդիպէր Գրիգոր ԺԳ Պապի գահակալութեան որ կը ձեռնարկէր արեւելքի եկեղեցիները Հռոմի միացնելու ծրագրին, երբ նաեւ իր



անունով Գրիգորեան Նոր Տոմարի դրութիւնը կը հաստատէր:

Ազարիա ըստ Բաբգեն Կաթողիկոսի «որպէս ուղղափառ եւ հաւատարիմ վարդապետ Հայաստանեայց Եկեղեցւոյ», պաշտպան կանգնած է իր եկեղեցիին, սակայն հակասութեան մէջ կ'իջնայ երբ կը մէջբերէ Ազարիայի գրած «վաւերական» կոչուած նամակը նոյն Հռոմի Գրիգոր Պապին ուղղուած, ուր Ազարիա «հնազանդութիւն կը յայտնէր Հռոմի եկեղեցիին եւ անոր առաքելական օրհնութիւնն ու հաստատութիւնը կը խնդրէր Կիլիկիոյ Աթոռին վրայ»: Կեղծուած «Դաշանց Թուղթ»ին ակնարկելով, «գալն մենք ալ կ'ընդունինք եւ կը փոշմանինք անցեալին վրայ եւ կ'ուրախանանք ապագային համար», ըսած է Ազարիա իր նամակին մէջ:

«Դաշանց Թուղթ» կոչուածը յերիւրուած էր Կիլիկիան թաղաւորութեան շրջանին որուն համաձայն իբր թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հռոմի Սեղբեստրոս Պապին մօտ գացած է եւ իր «հնազանդութիւնը» յայտնած չորրորդ դարու սկիզբը: Ուրեմն 800 տարիներ ետք շինծու եւ անարժէք այդ թուղթը Հայ Եկեղեցւոյ Հռոմի հպատակութեան նշան կը ցուցուէր, որուն կ'ակնարկէր Կիլիկիոյ Ազարիա Կաթողիկոս «գալն մենք ալ կ'ընդունինք» ըսելով:

Ի պաշտպանութիւն Ազարիայի, Բաբգեն Կաթողիկոս իր գիրքին մէջ կ'ապահովէ Մարգարիտ Օրմանեանի գրածները Ազարիայ մասին «իբրեւ կաթողիկոսաց մէջկը», հիմ ունենալով որ Օրմանեան իր «Ազգապատում»-ը գրած ատեն չէր տեսնած Դաւանադեցիի «Ժամանակագրութիւնը», որ ատենին տակաւին չէր հրատարակուած, ուր կը ժխտուէր Ազարիայի ամէն հակում դէպի Հռոմ, եւ Ազարիային վերագրուածը «նենգով դարբնուած կեղծագրութիւն մըն է պարզապէս» կ'ըսէ Բաբգեն Կիլիկիայի Կաթողիկոս:

Այսուհանդերձ վերոյիշեալ Ազարիայի նամակը Բաբգեն Կաթողիկոս «վաւերական» կ'որակէ, որ լի է Հռոմի հանդէպ ցոյց տրուած ենթակայութեան եւ հնազանդութեան լիաբերան օրհնութիւններով: Ազարիայի այդ նամակը երբեք չարդարացնէր Ազարիայի «ուղղափառութիւնը» որուն համար Բաբգեն տկար եւ անցողակի պատճառաբանութիւն մը տուած է միայն, թէ «Ազարիա հնարաւոր գիշումները ըրած էր վատիկանին՝ անկից քաղաքականապէս օգտուելու յոյսով», որոնք բոլորովին անպատու մնացին, ինչպէս Բաբգեն Կաթողիկոս ինք կը հաստատէ:

Անուշ Էլյաքեան Երկու Emmy-ներու Մրցանակակիր

Յունիսի 26ին, 2021, New England Emmy Awards հանդիսութեան ընթացքին Անուշ Էլյաքեան մրցանակի արժանացաւ քորօնա համավարակի հետ առնչուող The Virus Tale գործին համար, ուր կը նկարագրուի թէ ինչպէս համավարակը տարածուած է Մասաչուսէթ նահանգին մէջ:

Էլյաքեան նմանապէս արժանացաւ «Խմբագրի լուրեր» արտադրութեան համար: Ան ցարդ արժանացած է Emmy մրցանակներու:

Էլյաքեանի տօրիսութեան ենթակայ է տեսաերիզներ արտադրող խումբ մը, որ օրական տեսաերիզներով լուր կը պատրաստէ եւ միաժամանակ հեղինակն է թուայ-



նացուած տեսաերիզային տեսաշարերու («սէրիալ»):

Ա. Եւ Մ. Յովսէփեան Վարժարանի Անավերջի Աւարտական Յանդէսը



Ուրբաթ, 25 յունիս 2021-ի երեկոյեան տեղի ունեցաւ Արեւմտեան Թեմին ներս գործող Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ա. Եւ Մ. Յովսէփեան Վարժարանի նախկին Վարժարանի, ինչպէս նաեւ հինգերորդ եւ ութերորդ դասարաններու ամալերջի աւարտական հանդէսը, ներկայութեամբ՝ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի, եկեղեցւոյ հովիւ՝ Տ. Սարգիս Ա. Քհնյ. Պետոյեանի, թեմի հոգեւորականներու, վարժարանի տնօրէնութեան, անձնակազմի, ծնողներու, բարեկամներու եւ շրջանաւարաններու:

րար այս հանդէսը, շնորհակալութիւն յայտնեց նաեւ ծնողներուն՝ փոքրիկներուն հայեցի դաստիարակութեան մէջ իրենց ունեցած ներդրումին համար, շեշտելով հայ դպրոցի եւ հայ մանկապարտէզի կարեւորութիւնը, մաղթելով, որ տարիներ վերջ այս փոքրիկները այս նոյն բեմին վրայ կը ստանան վարժարանի աւարտական դասարանի իրենց վկայականները: Ապա փոքրիկները Սրբազան Հօր շուրջ գալով միաբերան աղօթք վեր առաքեցան առ Աստուած, հետեւեալ գեղեցիկ բառերով.

«Միրելի Աստուած, այսօր եկած ենք, Աղօթք կատարելու, շնորհակալութիւն ըսելու, Որովհետեւ Դուն, կ'օրհնես մեզ, Մեզի կու տաս իմաստութիւն, Բարի հովիւ, բարի տեսուչ, նուիրուած ուսուցիչներ:

Տեղի Ունեցաւ Գոսթա Մեսայի Սուրբ Մարիամ Հայց. Եկեղեցւոյ Հանդիսասրահի Հիմնարկէքի Արարողութիւնը



Կիրակի, 20 Յունիս 2021-ը յիշարժան օր մըն էր Գոստա Մեսայի Սուրբ Մարիամ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ կեանքէն ներս: Այդ օրը եկեղեցին սովորականէն աւելի բազմամարդ էր, քանզի եկեղեցւոյ կամարներէն ներս մէկտեղուել էին բազում հաւատացեալ հայորդիներ, որպէսզի հաղորդակիցը ըլլային սրբազնասուրբ եւ հոգեգմայլ արարողութեանց: Օրուան պատարագին էր Թեմիս Բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, աւրնթերականութեամբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Տ. Սերովբէ Քհնյ Ալանճեանի եւ եկեղեցւոյ վաստակեալ հոգեւոր հովիւ՝ Տ. Մուշեղ Ա. Քհնյ. Թաշճեանի: Ս. Պատարագին իրենց մասնակցութիւնը բերեցին նաեւ Արժ. Տ. Հրանդ Ա. Քհնյ. Երէցեանը եւ Արժ. Տ. Ստեփանոս Քհնյ. Տինկելեանը:

Ալեքս Գոնսալեսը, ինչպէս նաեւ Թեմի տարբեր ծուխերէն ժամանած հոգեւորականներ, մտաւորականներ, թեմական զանազան կառույցներու ներկայ եւ նախկին պատասխանատուներ:

Արարողութեանց աւարտին տեղի ունեցաւ ճաշկերոյթ, ջրնթացս որի, ներկաներէն՝ Թախկան խորհրդի ատենապետ Տիար Մայք Հովիւս, շինարարական կոմիտէի նախկին ատենապետ՝ Տիար Արամ Պասենեան, ծուխի նախկին հովիւ՝ Արժ. Տ. Մուշեղ Ա. Քհնյ. Թաշճեան եւ ներկայիս հովիւ՝ Արժ. Տ. Սերովբէ Քհնյ. Ալանճեան, իրենց սրտի ցանկութիւնները եւ ծուխի ապագային վերաբերեալ իրենց տեսլականները արտայայտեցին: Օրուան հանդիսավարն էր՝ Տիար Փօլ Խաչիկեան:

Միջոցառման վերջաւորութեանը, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանն իր ուրախութիւնը եւ գնահատանքը յայտնեց Կոստա Մեսայի համայնքի անդամներուն՝ ըսելով. «այս օրը ուրախալի եւ հոգեպէս նոր շունչ տուող օր մըն է մեր հաւատքի կեանքին մէջ: Քանզի եկեղեցւոյ եւ համայնքային հիմնադիրներու կողմէ կեանքի կոչուած այս գեղեցիկ ծրագրով, որը համակուած է նոր ուժով եւ այդ նորի խոստումը կատարելու պարտաւորութեամբ եւ իրագործմամբ, արժանի է միայն գնահատանքի եւ օրհնութեան»: Սրբազան Հայրն իր խօսքին մէջ մէջբերում ընելով Արքեպիսկոպոս Դեսմունդ Տուտուրի հետեւեալ միտքը, թէ «Աստ-



այս միջոցառումը իր ներկայութեամբը պատուելու համար, ապա շնորհակալութիւն յայտնեց աշակերտներուն, անոնց ծնողներուն, ուսուցիչներուն եւ յաջողութիւն մաղթեց փոքրիկներուն, որոնք, աւարտելով մանկապարտէզը, պիտի անցնին տարրական բաժին: Այնուհետեւ փոքրիկները իրենց գեղեցիկ արտասանութիւններով հիացուցին ներկաները, որմէ յետոյ տեղի ունեցաւ վկայականներու յանձնման արարողութիւնը:

Այսօր սիրելի Աստուած կ'աղօթենք մեր հայրերու, մեր մայրերու եւ մեր բոլոր սիրելիներու համար:

Օրհնէ մեզ յաւիտեան. Ամէն»: Մանկապարտէզի աւարտական հանդեսէն յետոյ սկիզբ առաւ հինգերորդ եւ ութերորդ դասարաններու աւարտական միջոցառման յայտագիրը: Հանդիսութեան ընթացքին հերթաբար ելոյթներ ունեցան շրջանաւարտ սաներ, ովքեր յուզ-

Սուրբ Պատարագի վերջաւորութեանը հոգեւորականներու թափօրը Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ առաջնորդուեցաւ դէպի եկեղեցուն կից նոր կառուցուելիք հանդիսութիւններու սրահին վայրը, ուր ձեռամբ՝ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի կատարուեց հիմնարկէքի արարողութիւն: Արարողութեանը իրենց մասնակցութիւնը բերեցին՝ Արեւմտեան Թեմի թեմական խորհրդի ատենապետ Տիար Դերիկ Ղուկասեան իր Տիկնոջը հետ, Կոստա Մեսայի քաղաքապետ Տիար Զոն Սթիվէնսը, փոխքաղաքապետ Թիմ Անտրէա Մարը, քաղաքային խորհրդի անդամներ՝ Մանուէլ Չափեալը, Զեֆ Հարլին, Արլիս Ռեյնոլտսը, աշխատակազմի ղեկավար

Գինեգործութեան Զնագոյն Երկիրը. «Forbes»-ի Յօդուածը



900.000 տպաքանակը գերազանցող ամերիկեան յայտնի ամսագիրը՝ «Ֆորպս»-ը, անգամ մը եւս կ'անդրադառնայ հայկական գինիներուն եւ Հայաստանի խաղողագործութեան: Ամսագիրը կը պատմէ հայաստանեան գինեգործութեան ականդուրներուն, ինչպէս նաեւ այն մարտահրաւէրներուն եւ դժուարութիւններուն մասին, որոնց դէմ յանդիման կը գտնուին հայ գինեգործները:

Քաթրին Թատի ստորագրած յօդուածին խորագիրն է՝ «Գինեգործութեան Հնագոյն Երկիրներէն Մէկը, Որ Խաղող Կ'աճեցնէ Հակամարտութեան Գօտիին Մէջ»: Հայաստանի վերածնունդը»:

Թատ կը ներկայացնէ այն գինեգործները, որոնց բերքը կ'աճի Ատրպէյճանի հետ սահմանամերձ գօտիին մէջ: «Գինեգործութեան որոշ շրջաններու մէջ խաղողագործները երբեմն ստիպուած են շիշերով լեցուած արկղերով փախուստ տալ թշնամիի գնդակէն... Հայ գինեգործները շատ բաներ տեսած եւ ապրած են. խորհրդային տարիներուն, անոնք ստիպուած եղած են պաշտպանուելու բռնաճնշումներէ, միութեան փլուզումէն ետք անորոշութեան մէջ յայտնուած են, իսկ հիմա՝ հակամարտութեան գօտիին մէջ են, ուր իւրաքանչիւր բերքահաւաք կրնայ կենացմահու իրավիճակ ստեղծել», կը գրէ յօդուածագիրը:

Խօսքը մասնաւորապէս Բերդաւան սահմանամերձ գիւղին մասին է, որ կը գտնուի Հայաստանի Տաւուշի մարզին մէջ:

«Հետաքրքրականը այն է, որ մարդիկ ամէն ձեւով կը շարունակեն մշակել իրենց բերքը եւ յատուկ թրթիւով կը վերաբերին գինիի արտադրութեան հետ, մանաւանդ որ բարձրորակ հայկական գինիներու պահանջը կ'աւելնայ», կը գրէ Քաթրին Թատ:



Յօդուածին հեղինակը նաեւ կը չիչեցնէ, որ Հայաստանի մէջ յայտնաբերուած է այսօրուան դրութեամբ աշխարհի հնագոյն գինեգործական համալիրը: «2010-ին, Արենի գիւղին մէջ՝ գինիներով յայտնի վայոց Ձորի մարզին մէջ, հնագէտները հնագոյն գինեգործական հնձան, խմորման եւ հնացման անօթներ, ըմպանակներ, խաղողի չորցած տուակներ, կեղեւ եւ սերմեր յայտնաբերեցին: Գտածոն 6000 տարեկան է: Անոնք գտնուեցան Արենի 1 կոչուող քարանձաւին մէջ», կը նշէ Թատ:

«Ֆորպս»-ի յօդուածագիրը նաեւ կը պատմէ, որ Հայաստանի մէջ խաղողի առաւել քան 400 տեղական տեսակներ կան:

Չկայ ԶԱՊԿ Զեղինակութիւն

Շարունակուած էջ 2-էն

Այստեղ էլ, իհարկէ, կասկածից վեր է, որ Հայաստանին այդ քայլից հետ է պահուած այն, թէ ինչպէս կը վերաբերի դրան Ռուսաստանը: Իսկ գուցէ ժամանակն է յայտարարել ՌԴ-ի հետ այդ հարցի շուրջ խորհրդակցութիւն սկսելու մասին: Կայ տարածուած տեսակէտ, թէ այդ դէպքում ՀԱՊԿ անդամ կը դառնայ Ատրպէյճանը,

քանի որ Հայաստանը կը կորցնի ձայնի իրաւունքը, այսինքն՝ վետոյի իրաւունքը: Մոլորութիւն է, թէ Ատրպէյճանը ձգտում է դառնալ ՀԱՊԿ անդամ: Աւելին, երբ Հայաստանը դնի հարցը լուրջ քաղաքական բովանդակութեամբ, ապա գուցէ պայթի նաեւ Ատրպէյճանի այդ խաղը, որը զգալիօրէն կառուցուած է նաեւ հենց Հայաստանի անդամութեան հանգամանքի վրայ: «ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ» Կայքէջ

Անդադար Ձորավարժութիւններ

Շարունակուած էջ 2-էն

տեխնոլոգիաների հիման վրայ նոր գինատեսակների, տեխնիկայի ձեռքբերման գործընթաց:

Ռազմական հզօրութիւնն աւելացնելուն գուգահեռ Ալիեւն աշխատում է քարոզչական դաշտում՝ դէպի Հայաստան ուղեւորելով: «Հայաստանը, եթէ չհրաժարուի մեր նկատմամբ թշնամական քաղաքականութիւնից, ապա չի կարողանայ վերականգնել ոչ միայն ռազմական ուժը, բանակը, նաեւ կ'ունենայ սահմանափակ հնարաւորութիւններ՝ տնտեսական ակտիւութեան վերականգնման համար», - ասել է Ալիեւը:

Բացի այդ, նա Հայաստանին առաջարկել է «մոռանալ Լեռնային Ղարաբաղ արտայայտութիւնը»: «Հայաստանն ունի մէկ ճանապարհ՝ յարաբերութիւնները կարգաւորել իր հարեւանների հետ, հրաժարուել տարածքային պահանջներից եւ ընդհանրապէս չօգտագործել Լեռնային Ղարաբաղ արտայայտութիւնը», - նշել է Ալիեւը: Նա կրկին աստիճանական թէգն է առաջ տարել, որ Լեռնային Ղարաբաղ տարածքային միաւոր գոյութիւն չունի, Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւն հասկացութիւն՝ եւս: Ապա՝ Ատրպէյճանի նախագահը խօսել է հայատրպէյճանական սահմանի դելիմիտացիայի մասին: Նա նշել է, որ սահմանների դելիմիտացիա համար պէտք է ստեղծուի աշխատանքային խումբ, աշխատանքներ տարուեն Հայաստանի հետ՝ խաղողութեան պայմանագրի պատրաստման ուղղութեամբ: «Ես մէկ անգամ չէ, որ յայտարարել եմ եւ մէկ անգամ էլ ուզում եմ ասել՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը լուծուած է, Հայաստանը դա պէտք է ընդունի եւ մեզ հետ աշխատի սահմանների որոշման ուղղութեամբ», - ասել է նա:

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Ալիեւը ամենաբաթեայ ռեժիմով իրեն պարտաւորուած է զգում չիչեցնել Հայաստանին, մեր տարածաշրջանում հիմնական խաղացողներին, թէ ով է «յաղթել» պատերազմում եւ ինչ է ակնկալում հայկական կողմից, ուրեմն, թուրքատրպէյճանական տանդեմն ինչ-որ մտավախութիւններ, այնուամենայնիւ, ունի, հետեւաբար, կարելի է եզրակացնել, որ պաշտօնական Երեւանը նաեւ մանեւրելու, ինչ-որ

բան առաջարկելու ու ակնկալելու, ստանալու հնարաւորութիւններ էլ ունի: Այլ հարց է, թէ այսօրուայ իշխանութիւնները նոյնիսկ պատերազմում հայկական կողմի պարտութիւնից յետոյ ընձեռուած հնարաւորութիւններից ունա՞կ են օգտուել եւ ՀՀ շահն առաջ տանել:

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լաւրովը Յունիսի 30-ին ժամանեց Անթալիա, օրակարգում ռուս-թուրքական, միջազգային օրակարգի արդիական հարցեր էին, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասում տիրող իրավիճակը: Յիշեցնենք, որ վերջերս մեկնաբանելով Շուշիի հռչակագիրը՝ ՌԴ ԱԳՆ պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան նկատել էր, թէ Մոսկուան ճիշտ չի համարում ԼՂ-ում կարգաւորմանն առնչուող թեմաները տարածաշրջանի պետութիւնների արտաքին կապերի հետ խառնելը: Իսկ Յունիսի 24-ին ՌԴ եւ Թուրքիայի նախագահները հեռախօսազրոյց էին ունեցել, դրական էին գնահատել ԼՂ-ում ռազմական գործողութիւնների եւ կրակի դադարեցման հսկողութեան ռուս-թուրքական համատեղ կենտրոնի աշխատանքը: Այսքանը՝ հրապարակային մասն է: Իսկ ինչպիսի՞ն է Փութինի ու Լաւրովի վերաբերմունքը Շուշիի հռչակագրով ռազմաքաղաքական դաշինք կնքած, թուրքական բանակի հետ միաձուլուած Ատրպէյճանի շարունակական սադրիչ քաղաքականութեան առնչութեամբ:

Այն, որ Հայաստանի իշխանութիւնները բազմաթիւ սխալներ, բացթողումներ են ունեցել թէ պատերազմի ժամանակ, թէ եռակողմ յայտարարութիւն ստորագրելուց յետոյ՝ այդ մասին, ինչպէս ասում են՝ ով չի ալարում, խօսում է եւ միանշանակ, պէտք է բոլոր սխալների մասին մշտապէս բարձրաձայնել: Իսկ ռուսական իշխանական վերնախաւը, նրանց քարոզչագործիքներն ու նրանց քարոզչութեան տարածման հիմնական կատարողները մեր տարածաշրջանում ռուսական թոյլ, երկչոտ քաղաքականութիւնը փրկելու ու արդարացնելու ճանապարհին դեռ որքա՞ն են ամէն ինչում Փաշինեանին մեղադրելու...:

Չլինի՞, թէ Փաշինեանին հակառակուելու համար են ռուս-թուրքական մեղրամիսի հերթական փուլերը կեանքի կոչուում: «ԱՌԱՒՕՏ» ՕՐԱԹԵՐԹ

Տեղի Ունեցաւ Գոսթա Մեսայի Սուրբ Մարիամ

Շարունակուած էջ 13-էն

ուած երազ մը ունի»... շարունակեց ըսելով. «Այսօր մենք ալ Աստուծոյ այդ նոյն երազն ունինք մեր հոգու մէջ եւ կոչուած ենք անխոնջ դեսպանները ըլլալու Տիրոջ կողմէ հիմնուած մեր Սուրբ Եկեղեցոյ, ուստի պէտք է ամենայն մեծ սիրով,

պատասխանատուութեամբ եւ ջանասիրութեամբ ծառայենք մեր Սուրբ Եկեղեցոյ համայնքային կեանքին՝ առատօրէն նուիրելով մեր տաղանդներն ու շնորհները՝ ի փառս եւ ի գոհութիւն Աստուծոյ»:

Ապա Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքով եզրափակուեց օրուան հանդիսութիւնը:

Ա. Եւ Մ. Յովսէփեան Վարժարանի

Շարունակուած էջ 13-էն

մունքով հրաժեշտ կու տային իրենց սիրելի վարժարանին:

Ապա Առաջնորդ Սրբազան Հայրը, եկեղեցոյ հովուի եւ տնօրէնի հետ միասին յանձնեց շրջանաւարտներու վկայականներն ու

առաջադէմ աշակերտներու մրցանակները: Վկայականներու բաշխումէն յետոյ Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը փոխանցեց շրջանաւարտներուն: Երեկոյն փակուեցաւ «Պահպանիչ» եւ «Հայր մեր» աղօթքներով:

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ՀՈՒՐԻ ՊԷՔՄԷԶԵԱՆ-ԿԻՒՏԷՇԵԱՆ-ի մահուան Ա. տարելիցին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Կիրակի, 18 Յուլիս, 2021ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ:

Սգակիրներ՝ Ամուսինը՝ Յարութ Կիւտէշեան եւ զաւակները Արա եւ Շահէ Ծնողքը՝ Տէր եւ Տիկ. Շահէ եւ Մարիփան Պէքմէզեան Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Պէքմէզեան Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Ռէպէքա Կիւտէշեան:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ստեփան Թիւթիւնճեանի մահուան տխուր առթիւ Տօքթ.Եւ Տիկ. Համբիկ եւ Նաիրա Սարաֆեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի տիկնոջ, զաւակներուն եւ հարազատներուն: Առ այդ, փոխան ծաղկեպսակի կը նուիրեն՝ \$100 «Մասիս» շաբաթաթերթին \$100 Լիբանանի «Արարատ» օրաթերթին

Երկու Ստորում՝ Օրուան Համահունչ

Շարունակուած էջ 11-էն

լալ նոյն իսկ տիրոջ հանդէպ: Երես դարձուցէք զգացումներուն: Եթէ մանուկի մը ձեռքը կարագ կայ, բարեկամացէք: Ձեր կուսակը քսեցէք անոր մերկ ոտքերուն: Մանուկը կը ճանայ իր զգայ մուշտակէն եւ կը ձգէ ձեռքի կարագը: Յափշտակեցէք, կերէք, եւ զացէք երազել տաք օճախին անկիւնը: Եթէ տանտիրուհին գոռայ ու պոռայ իր տղոցը, դուք փակեցէք ձեր աչքերը, քնանալ ձեւացուցէք: Սակայն միշտ արթննալ եղէք, պատրաստեցէք ճանկերը՝ եթէ ծեծելու գան»: Եւ կատուին գործնական խրատն է՝ «Զգացումները կը մոլորեցնեն ձեզ...»:


Գործնապաշտ քաղաքականութեան մը ալլաբանական պատկերն է այս՝ հեռու զգացական, վիպապաշտ եւ երազային երանգներէ: Ինչէ՞ տառապած ենք առաւելաբար՝ եթէ ոչ՝ գործէ աւելի խօսքերու շուրջը թեմէն, ճոռոմբան երոյթներէ, շրթնային մարտունակութենէ: Սա կայն՝ կեանքը ուրիշ կանոններով է որ կը թաւալի: Ինչքան ամբոխավառ երոյթներ

լսեցինք անցեալ տասնամեակներուն եւ պարզուեցաւ՝ խօսքեր են եւ ոչ գործեր: Մեր աշխարհագրական դիրքը կը պարտաւորեցնէ ունենալ ճանկեր եւ հեռու մնալ զգացական թրթիռներէ: Աշխատիլ միտքով, հաշուարկով եւ հաշիւով եւ ոչ թէ բարեպաշտական պատուիրաններով: Թշնամիներ չեն նկատած մեր այս թուրութիւնը: Չեն նշմարած այն թերութիւնները, որոնք եղան մեզմէ անբաժան: Ահա թէ ինչու ֆրանսահայ մտաւորականը կատուին ընդմէջէն կը փոխանցէ իրապաշտ քաղաքականութեան մը սկզբունքները, գոյատեւելու համար՝ խորամանկելու նուրբ արուեստը: Եւ այս, տասնեակ տարիներ առաջ, որոնք անշուշտ մնացած են անլսելի, անարձագանգ:

Այնուամենայնիւ, վերոնշեալ մտորումները կը բխին անցեալէն, մեր ցաւոտ պատմութենէն եւ կ'առնչուին մեր օրերուն: Յաւելեալ ինքնաճանաչումէ ետք, անյապաղ-օրէն պէտք է՞ սրբագրուին խոցելի կէտերը մեր կեանքին: Օրուան համահունչ միտքեր չեն անոնք:

«ԱՐԱՐԱՏ» ԼԻԲԱՆԱՆ

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ՊՕՂՈՍ ՄՈՒԹ-ԱՖԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Յուլիս 18, 2021ին Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական եկեղեցոյ մէջ:

Խնդրողներն են՝ Ազնիւ Մութաֆեան Մինաս Մութաֆեան

ՊՕՂՈՍ ՄՈՒԹ-ԱՖԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Յուլիս 18, 2021ին Լուրգիանայի Ս. Կարապետ Հայց. Առաքելական եկեղեցոյ մէջ:

Խնդրողներն են՝ Այրին՝ Տիկ. Ազատուհի Մութաֆեան եւ զաւակները:

ԱՐԱՐԱՏ-Ը ԿԱՆԳՈՒՆ ՊԱՆԵՆՔ

Մայրիներու յաւերժական երկիր եւ հայկական սփիւռքի բաբախուն սիրտը հանդիսացող Լիբանանը, ցաւօք սրտի, օրէ օր աւելիով կը հիւծի տնտեսական սուր ճգնաժամին հետեւանքով:

Գոյութեանական պայքար կը մղեն Լիբանանի բոլոր կառոյցները, բոլոր հաստատութիւնները, հայցելով նիւթական աջակցութիւն՝ այս անսախաղէպ տագնապալի օրերը յաղթահարելու համար:

Արդ, ութսունչորսամեայ «Արարատ» օրաթերթը այսու կոչ կ'ուղղէ իր աշխարհատարած ընթերցողներուն եւ բարեկամներուն՝ ապաւինելով անոնց բարձր գիտակցութեան եւ հայ մամուլի գոյերթը պահպանելու անոնց նախանձախնդրութեան:

Սիրելի ընթերցող,

Սրբազան լեռ Արարատին անունը կրող մեր լրագիրը այսօր կարիքը ունի իւրաքանչիւր հայորդիի լումային, ամէն ոք իր կարողութեան սահմաններուն մէջ: Ձեր նուիրաբերած ամէն մէկ դահեկանը պիտի ծառայէ յանուն այս նշխարի գոյատեւման ու յառաջընթացին:

«Արարատ» աւելի քան ութսուն տարի եղած է հայ անհատին ձայնն ու խօսափողը. այժմ մեր հերթն է ձայն տալու եւ զօրավիզ կանգնելու անոր, սատարելով անոր նուիրական առաքելութեան անխափան երթին:

Կանգուն պահենք «Արարատ»ը, որպէսզի «Արարատ»ն ալ մեզ կանգուն պահէ:

* Նուիրատուութեան համար կապ հաստատել՝ whatsapp: +961 3 542 782 e-mail: araradoratert@gmail.com

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :-----
Email: -----

Իտալիա Եւ Անգլիա Յասան Եւրո 2020-ի Աւարտականին

Եւրո 2020-ի մրցաշարքը համաճարակի պատճառաւ յետաձգուել է ետք տեղի ունեցաւ այս տարի: Առաջին անգամ ըլլալով խաղերը տեղի ունեցան Եւրոպական 12 տարբեր քաղաքներու մէջ:



Կիսաեզրափակիչի առաջին մրցումին Իտալիա, որ իր մրցաշարքի ընթացքին մնացած էր անպարտելի, խաղցաւ Սպանիոյ հաւաքականին հետ: Առաջին խաղակէսը աւարտեցաւ 0:0 արդիւնքով: Մրցումի 60-րդ վայրկեանին Իտալիա առաջ անցաւ Ֆէտէրիքօ Չիսալի նշանակած կոլին շնորհիւ: Այս կոլէն ետք նախաձեռնութիւն անցաւ սպանացիներուն կողմը, որոնք կարողացան 80-րդ վայրկեանի հաւասարեցնել հաշիւը ու խաղի հիմնական ժամանակը աւարտեցաւ հաւասար արդիւնքով:

Կէս ժամուայ երկարաձգումէն ետք արդիւնքը մնաց անփոփոխ ու հետեւեալ րդիմուեցաւ 11 մեթրանոց փենալթի հարուածներու, որոնց ընթացքին Իտալիա յաղթական դուրս եկաւ 4:2 արդիւնքով:

Կիսաեզրափակիչի երկրորդ խաղին մրցեցան Անգլիոյ եւ Տանիմարքի հաւաքականները:

Առաջին խաղակէսին խումբերը փոխանակեցին մէկական կոլ ու հանգիստի գացին 1:1: Բ. խաղակէսին արդիւնքը մնաց անփոփոխ: Կէս ժամուայ երկարաձգումի 13-րդ վայրկեանին Անգլիա ստացաւ 11 մեթրանոցի իրաւունք: Անգլիոյ խմբապետ Հէրի Քէյնի հարուածը ետ մղուեցաւ Տանիմարքի բերդապահին կողմէ, սակայն Քէյն վրայ հասնելով դնդակը ուղարկեց դարպասէն ներս: Այսպիսով խաղը աւարտեցաւ 2:1 արդիւնքով՝ յօգուտ Անգլիոյ:

Աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Լոնտոնի «Ուէմպլըյ» մարզադաշտին վրայ Կիրակի, Յուլիս 11-ին, Լոս Անճելոսի ժամով կէսօրուայ 12-ին ու Ամերիկայի տարածքին պիտի սփռուի ESPN-ով:

Պրագիլ Եւ Արժանթին Յասան Ամերիկայի Գաւաթի Աւարտական Խաղին

Պրագիլի մէջ ընթացող Ամերիկայի Գաւաթի (Copa America) աւարտական խաղին կը մրցին Հարաւային Ամերիկայի երկու ուժեղագոյն երկիրները՝ Պրագիլի եւ Արժանթինի հաւաքականները:

Կիսաեզրափակիչի առաջին մրցումին Պրագիլ նուազագոյն արդիւնքով պարտութեան մատնեց Փերուի ազգային խումբը: Մրցումի միակ կոլը առաջին խաղակէսի 35-րդ վայրկեանին նշանակեց Լուքս Պաբլօսթան:

Կիսաեզրափակիչի երկրորդ մրցումին ճակատեցան Արժանթինի եւ Գոլոմպիայի հաւաքականները:

Խաղը սկսաւ Լիոնէլ Մեսիի ու իր ընկերներու խաղային առաւելութեամբ եւ 7-րդ վայրկեանին Լաուիսարօ Մարթինէզի նշանակած կոլով Արժանթին առաջ անցաւ 1:0 արդիւնքով: 61-րդ վայրկեանին Գոլոմպիա հաւասարեցուց հաշիւը՝ Լիւիս Տիագի կոլին շնորհիւ ու խաղի հիմնական ժամանակը աւարտեցաւ 1:1 արդիւնքով:

Առանց երկարաձգումի՝ դիմուեցաւ 11 մեթրանոց փենալթի հարուածներու՝ վճռելու համար յաղթող խումբը: Այս ընթացքին մրցումի հերոսը դարձաւ Արժանթին դարպասապահ Էմիլիօ Մարթինէզ, որ յաջողեցաւ ետ մղել Գոլոմպիայի հինգ հարուածներէն երեքը ու խաղը աւարտեցաւ Արժանթին յաղթանակով:

Աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յուլիս 10-ի երեկոյեան Լոս Անճելոսի ժամով 5-ին ու Ամերիկայի տարածքին պիտի սփռուի FOXSports1-ով:

ՀՖՖ-ն Ակումբներուն Առաջարկած Է Ստեղծել ԱտիւտաՎարժ Ֆութպոլի Լիկա

Հայաստանի ֆութպոլի ֆեդերացիան պաշտօնապէս դիմած է ակումբներուն արհեստավաժ ֆութպոլի լիկայի ստեղծման շուրջ քննարկումներ ծաւալելու առաջարկով:



Վերջին մէկ տարուան ընթացքին Հայաստանի ֆութպոլի ֆեդերացիան աշխուժօրէն աշխատած է արհեստավարժ ֆութպոլի լիկայի ստեղծման ուղղութեամբ՝ հարցի վերաբերեալ բազմաթիւ քննարկումներ անցկացնելով իր միջազգային գործընկերներուն հետ: Շահագրգիռ քննարկումներու եւ փորձի փոխանակման արդիւնքով ՀՖՖ-ն մշակած է Հայաստանի արհեստավաժ ֆութպոլի լիկայի (ՀՊՖԼ) կանոնադրութեան եւ «ՀՖՖ-ՀՊՖԼ» փոխըմբռնման յուշագրի նախնական աշխատանքային տարբերակները, որոնք ՀՖՖ նախագահ Արմէն Մելիքբեկեանը Յուլիսի 2-ին ուղարկած է ակումբներուն:

Հայաստանի ֆութպոլի ֆեդերացիան խնդրած է բոլոր ակումբներուն մէկամասնայ ժամկէտի ընթացքին ուսումնասիրել փաստաթղթերը, որմէ յետոյ ՀՖՖ-ի մէջ հանդիպում կը կազմակերպուի բոլոր շահագրգիռ կողմերու մասնակցութեամբ՝ քննարկելու առաջարկները, դիտողութիւնները եւ յետագայ քայլերը: Հայաստանի ֆութպոլի

Լեւոն Արոնեանը Յաղթեց Goldmoney Asian Rapid-ի Մէջ



Գրոսմայստեր Լեւոն Արոնեանը յաղթեց Goldmoney Asian Rapid 7-րդ միջազգային մրցաշարին:

Արագ շախմատի առցանց մրցաշարի եզրափակիչի խաղային երկրորդ օրը եւս Արոնեանը յաղթանակ տարաւ՝ պարտութեան մատնելով Վլադիսլավ Արտեմիւեւին 2:0 հաշուով:

Goldmoney Asian Rapid մրցաշարի կազմակերպիչները աշխարհի ախոյեան Մագնուս Կարլսենը եւ կանանց վարկանիշային աղիւսակի առաջատար Հու Յաֆանը: Մրցաշարն ունի 1,6 միլիոն մրցանակային ֆոնս:

Արոնեանը դեռեւս հանդէս կու գայ Հայաստանի դրօշի ներքեւ: Օրեր առաջ ան յայտարարութիւններ տարածած էր, որու մէջ տուած էր վերջին շրջանին իր անձի հետ կապուած շրջանառուող հարցերու պատասխանները. Արոնեանը կը հեռանայ Հայաստանէն: Ան կը միանայ ԱՄՆ հաւաքականին:

Լիովա Գէորգեանը Յաղթեց Ատրպէյճանցի Ըմբիշին Եւ Հռչակուեցաւ Եւրոպայի Ախոյեան



Գորոսմունդի մէջ ընթացող ըմբշամարտի Եւրոպայի երիտասարդական առաջնութեան Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հաւաքականը նուաճեց երեք մետալ:

Նախ 61 կգ քաշային Լեւիկ Միքայէլեանը եզրափակիչ մենամարտի ընթացքին պարտուեցաւ ատրպէյճանցի ըմբիշին եւ բաւարարուեցաւ արծաթէ մետալով: 92 կգ քաշային Սերգէյ Սարգսեանը 3-րդ տեղի համար մարտի ընթացքին ժամանակէն շուտ յաղթեց հունգարացի մարզիկին եւ նուաճեց պրոնզէ մետալ:

125 կգ քաշային կարգին ըմբիշ Լիովա Գէորգեանը 11:0 հաշուով յաղթեց ատրպէյճանցի մրցակցին եւ հռչակուեցաւ Եւրոպայի ախոյեան:

Այդպիսով, Հայաստանի հաւաքականը նուաճեց 5 մետալ՝ 1 ոսկէ, 2-ական արծաթէ եւ պրոնզէ: Խմբային հաշուարկով Հայաստանը զբաղեցուց 5-րդ տեղը:

Կարէն Խաչանովն Առաջին Անգամ «Ուիմպլտոնի» Քառորդ Եզրափակիչին Յասաւ

Ռուսաբնակ Կարէն Խաչանովը (29) իր արհեստավարժ մարզական կեանքին մէջ առաջին անգամ հասաւ «Ուիմպլտոնի» մրցաշարի քառորդ եզրափակիչ:

25-ամեայ հայ թենիսիստը 1/8 եզրափակիչին մրցեցաւ 21-ամեայ ամերիկացի Սեբաստիան Կորդայի (50) հետ եւ առաւելութեան հասաւ հինգ սեթում՝ 3:6, 6:4, 6:3, 5:7, 10:8: Մրցապայքարը տեւեց 3 ժամ 50 վայրկեան:

Քառորդ եզրափակիչին Կարէն Խաչանովի մրցակիցը կ'ըլլայ Գանատայի ներկայացուցիչ Դենիս Շապովալովի եւ սպանացի Ռոբերտո Բաուտիստա-Ագուտի դիմակայութեան յաղթողը:

Ֆեդերացիան կ'ականալի ակումբներու նախաձեռնողական մասնակցութիւնը փաստաթուղթերու վերլուծութեան եւ յետագայ քննարկումներու փուլերուն: